

Ը.00.01 – ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը

Տնտեսագիտության տեսության առարկան: Տնտեսագիտության տեսությունը որպես գիտություն: Նրա տարբեր սահմանումները և զարգացման ուղղությունները: Տնտեսագիտական մտածելակերպի ձևավորումը: Տնտեսագիտության տեսության ժամանակակից ընկալումները, ուսումնասիրման շրջանակները:

Տնտեսագիտության տեսության ֆունկցիաները: Տնտեսագիտական մտածելակերպի ձևավորումը (տնտեսական մարդ): Տնտեսական երևույթների իմացության անհրաժեշտությունը: Տնտեսագիտության տեսության ճանաչողական, մեթոդաբանական, գործնական ֆունկցիաները և դրանց նշանակությունը:

Տնտեսագիտության տեսության ուսումնասիրության մեթոդները: Մեթոդ և մեթոդաբանություն հասկացությունները: Մետաֆիզիկա և դիալեկտիկա: Դիալեկտիկայի մեթոդները: Ուղիղ և հակադարձ կապի մեթոդը: Այլ հավասար պայմանների սկզբունքը: Պոզիտիվային և նորմատիվային տնտեսագիտություն: Տնտեսագիտական մտածելակերպի հիմնական սկզբունքները:

Տնտեսագիտության տեսության տեղն ու դերը տնտեսական գիտությունների համակարգում: Տնտեսագիտական գիտությունների դասակարգման տարբեր մոտեցումները: Տնտեսագիտության տեսություն, ընդհանուր, ճյուղային, ֆունկցիոնալ, պատմատնտեսագիտական, խառը տնտեսական գիտություններ: Միկրոտնտեսագիտություն: Մակրոտնտեսագիտություն: Համաշխարհային տնտեսագիտություն:

Տնտեսագիտության տեսության և մյուս գիտությունների փոխադարձ կապը: Փիլիսոփայությունը և տնտեսագիտությունը: Պատմությունը և տնտեսագիտությունը: Սոցիոլոգիան և տնտեսագիտությունը: Հոգեբանությունը և

տնտեսագիտությունը: Իրավագիտությունը և տնտեսագիտությունը: Բնագիտությունը և տնտեսագիտությունը:

Տնտեսագիտության տեսությունը և տնտեսական քաղաքականությունը: Տնտեսագիտության տեսական և գործնական նշանակությունը:

Տնտեսագիտության ելակետային հասկացությունները

Տնտեսական կատեգորիաները և օրենքները: Տնտեսական կատեգորիայի սահմանումը: Տնտեսական կատեգորիաների համակարգը: Տնտեսական օրենքի բնութագրումը: Տնտեսական օրենքների համակարգը:

Պահանջմունք: Պահանջմունքի բովանդակությունը: Բարիքի բնութագրումը: Բարիքի տեսակները: Նյութական, հոգևոր, ինտելեկտուալ, ինֆորմացիոն բարիք: Ռեսուրսների տնտեսագիտական բովանդակությունը: Ռեսուրսների տեսակները: Ռեսուրսների հազվագյուտությունը, սահմանափակվածությունը: Ռեսուրսների ծախսերի բովանդակությունը և այլընտրանքային բովանդակությունը:

Սեփականություն: Սեփականությունն իբրև իրավունքի օբյեկտ: Սեփականությունը որպես տնօրինման, օգտագործման և յուրացման գործընթացների համադրության: Սեփականության իրավունքի տնտեսական իրացումը: Սեփականության ձևերը և դրանց էվոլյուցիան: Սեփականաշնորհում:

Տնտեսական արդյունավետությունը: Տնտեսական արդյունավետությունը և աշխատանքի հասարակական բաժանումը: Բացարձակ և համեմատական առավետությունների օրենքը: Արդյունավետությունն ըստ Պարետտոյի:

Փողի ծագումը և էությունը: Աշխատանքի հասարակական բաժանումը և փոխանակության զարգացումը: Բարիքների արժեքների չափակցման միավորի (կամ էտալոնի) ընտրության խնդիրը: Փողի ծագումը և ֆունկցիաները: Փողի էության դասական և քեյնսյան մեկնաբանությունները: Փողի մետաղային, տեխնիկական միջոցի, նոմինալիստական, քանակային մոտեցումները:

Արժեքի (գնի) տեսությունը: Բարիքի արժեքի բովանդակությանը (տարբեր մոտեցումներ): Այլընտրանքային արժեքի տեսությունը: Արժեքի աշխատան-

քային տեսությունը և Սմիթի դրզման: Սահմանային օգտակարության տեսությունը: Սահմանային օգտակարության նվազման օրենքը: Սմիթի պարադոքսը: Արժեքի մեծությունն ըստ սահմանային օգտակարության տեսության: Մարշալի տեսությունը: Բազմագործոնային վերլուծության տեսությունը: Բարիքի արժեքի (կամ գնի) մեծությունն ըստ բազմագործոնային վերլուծության տեսության:

Արտադրության հիմքերը, գործոնները և արդյունքները

Արտադրությունը և նրա կառուցվածքը: Արտադրության և արդյունքի բովանդակությունը: Ի՞նչ արտադրել, ինչպե՞ս: Ո՞ւմ համար արտադրել: Արտադրության կառուցվածքը: Արտադրության ճյուղային և տարածքային կառուցվածքը:

Արտադրության գործոնները: Արտադրության գործոնների դասակարգումը: Կապիտալը որպես գործոն և նրա էությունը: Աշխատանքը որպես գործոն և նրա առանձնահատկությունը: Հողը որպես գործոն և նրա բովանդակությունը: Ձեռնարկատիրությունը որպես գործոն: Ինֆորմացիան որպես գործոն: Արտադրական հնարավորությունների կորը: Կորի տեղաշարժերը պայմանավորող գործոնները:

Արտադրության գործոնների ֆունկցիոնալ կախվածությունը: Արտադրական ֆունկցիան: Սահմանային արտադրողականության տեսությունը: Սահմանային արդյունքը: Արտադրության գործոնների օգտագործման արդյունավետությունը:

2. ՄԻԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շուկայական տնտեսակարգը

Տնտեսական համակարգի էությունը: Տնտեսական համակարգի բնութագրումը և դրա տարբեր մեկնաբանությունները: Վարչահրամայական համակարգ: Շուկայական տնտեսակարգը և դրա տարբեր բնորոշումները: Շուկայական համակարգի դրական և բացասական կողմերը:

Շուկայի հիմնական տարրերը: Գինը որպես շուկայի տարր: Գնի ֆունկցիա-

ները: Գների համակարգը, ճկունությունը և կարգավորման արագությունը: Գնի ներքին և վերին սահմանը: Գնային խտրականություն: Պահանջարկը և առաջարկը որպես շուկայի տարր: Մրցակցությունը որպես շուկայի տարր:

Շուկայի ֆունկցիաները և գործունեության սկզբունքները: Շուկայի կարգավորիչ, գնագոյացման, միջնորդային, խթանիչ, տեղեկատվական ֆունկցիաների էությունը: Շուկայի գործունեության սկզբունքները (տնտեսավարող սուբյեկտների իրավահավասարությունը, տնտեսական գործունեության ինքնակարգավորումը, ազատ գնագոյացումը, պայմանագրային հարաբերությունների ազատությունը, ինքնաձախսա-ձածկումը, տնտեսական պատասխանատվությունը և սպառողի գերակայությունը):

Շուկայի կառուցվածքի և ենթակառուցվածքի ընդհանուր բնութագիրը: Շուկան որպես բարդ օրգանիզմ և նրա դասակարգման անհրաժեշտությունը: Շուկայի օբյեկտները և սուբյեկտները: Տնային տնտեսություն, ֆիրմա (ձեռնարկություն), պետություն (կառավարություն): Շուկայի դասակարգման չափանիշներն ըստ ապրանքների սպառողական հատկանիշների, մրցակցության ձևի, կարգավորման եղանակի, շուկայական սուբյեկտների տարածքային հատկանիշների, հագեցվածության և օրինականության աստիճանի: Շուկայի ենթակառուցվածքը:

Պահանջարկի և առաջարկի տեսություն

Պահանջարկի բնույթը: Պահանջարկի տնտեսական օրենքը և դրա գործողության մեխանիզմը: Անհատական և շուկայական պահանջարկ: Պահանջարկի կորը: Պահանջարկի և պահանջարկի մեծության փոփոխության վրա ազդող գործոնները: Պահանջարկի գին հասկացությունը: Եկամտի էֆեկտը և փոխարինման էֆեկտը:

Առաջարկի բնույթը: Առաջարկի տնտեսական օրենքը և դրա գործողության մեխանիզմը: Անհատական և շուկայական առաջարկ: Առաջարկի կոր: Առաջարկի և առաջարկի մեծության փոփոխության վրա ազդող գործոնները: Առաջարկի գին հասկացությանը:

Պահանջարկի և առաջարկի փոխհարաբերությունները: Պահանջարկի և առաջարկի տնտեսական օրենքը և դրա գործողության մեխանիզմը: Հավասարակշռված գին: Պահանջարկի և առաջարկի կորերի տեղաշարժը: Պահանջարկի առաձգականությունն ըստ գնի: Պահանջարկի առաձգականությունն ըստ եկամտի: Առաջարկի առաձգականություն: Առաձգականության գործակիցները: Ա. Մարշալի «Քաղաքատնտեսության սկզբունքները» աշխատությունը:

Սպառողական վարքագծի տեսությունը

Սպառման էությունը: Սպառման և արտադրության կապը: Սպառման և արտադրության փոխհարաբերության տարբեր մեկնաբանությունները:

Սպառողական վարքագծի էությունը: Սպառողական նախասիրությունները և սպառողական ընտրությունը: Սպառողական վարքագծի ձևավորումը և դրա վրա ազդող գործոնները: Սահմանային օգտակարությունը և սպառողական վարքագիծը: Անտարբերության կորը և նրա տնտեսագիտական բովանդակությունը: Սահմանային օգտակարության առավելագույնի հասցնելու խնդիրը: Բյուջետային սահմանափակումը և սպառողական վարքագիծը: Սպառողական ավելցուկ: Սպառողի հավասարակշռությունը:

Կապիտալի շուկան և տոկոսը

Կապիտալի բնույթը: Արտադրության այլընտրանքային մեթոդը և կապիտալը (իրային և ոչ իրային): Կապիտալ բարիքի դրսևորման ձևերը (ֆիզիկական, կապիտալ ծառայություն, փոխառու միջոցներ): Կապիտալի զուտ արտադրողականությունը: Կապիտալի հազվագյուտությունն իբրև առանցքային հատկություն:

Կապիտալի շուկայի բովանդակությունը էությունը: Կապիտալի նկատմամբ պահանջարկը: Կապիտալի սահմանային արտադրողականությունը: Կապիտալի առաջարկը: Կապիտալի շարժի դրսևորման ձևերը: Կապիտալի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը: Տոկոսը որպես հավասարակշռության գին: Տոկոսը որպես եկամուտ և որպես ծախս: Տոկոսի

անվանական և իրական մակարդակ (Ֆիշերի բանաձև):

Կապիտալի շարժի ձևերը: Փոխատվական հարաբերությունների առաջացման դրդապատճառները: Փոխատվության աղբյուրները: Փոխատվությունը որպես կապիտալ միջոցների արդյունավետ օգտագործման ձև:

Արժեթղթերի շուկայի էությունը և կառուցվածքը: Արժեթղթերի տեսակների էվոլյուցիան: Բաժնետոմս, դիվիդենտ, վերահսկիչ ծրար, պարտատոմս, մուրհակ, ավանդային և խնայողական սերտիֆիկատներ: Արժեթղթերի շուկայի ֆունկցիաները: Արժեթղթերի առաջնային և երկրորդային շուկան: Ֆոնդային բորսան և նրա ֆունկցիաները: Արժեթղթերի կուրսը կամ իրական արժեքը և նրա վրա ազդող գործոնները: Արժեթղթերի ֆոնդային ինդեքսները:

Աշխատանքի շուկան և աշխատավարձը

Աշխատանքի շուկայի բնորոշ գծերը: Աշխատանքի շուկայի ձևավորման պայմանները: Աշխատանքի շուկայի առանձնահատկությունները: Աշխատանքի շուկայի վերաբերյալ տեսությունները: Աշխատանքի առաջարկը և պահանջարկը որպես ածանցյալ առաջարկ և պահանջարկ:

Աշխատավարձի էությունը: Աշխատավարձը որպես գործոնային եկամուտ: Աշխատավարձի մեծությունը որոշող գործոնները: Աշխատավարձը որպես հավասարակշռության գին: Արդյունավետ աշխատավարձ:

Աշխատավարձի ձևերը և համակարգերը: Աշխատավարձի ժամանակավարձային և գործավարձային ձևերը; Աշխատավարձի տարբերակումը և նրա սոցիալ-տնտեսական հետևանքները: Աշխատանքի ոչ դրամական բնութագրիչները (պայմանները, հեղինակությունը և աշխատանքի այլ՝ ոչ դրամական բնութագրիչներ՝ արտոնություններ և պարտադրված նպաստներ):

Աշխատավարձի մակարդակի հիմնախնդիրները: Անվանական և իրական աշխատավարձ: Աշխատավարձը որպես ծախս: Նվազագույն աշխատավարձ: Մոնոպսոնիան և նվազագույն աշխատավարձ: Արհմիությունների դերը աշխատավարձի կարգավորման գործում:

Հողային ռեսուրսների շուկան և ռենտան

Գյուղատնտեսության առանձնահատկությունը: Գյուղատնտեսական արտադրության բովանդակությունը և առանձնահատկությունները: Հողը որպես արտադրության գործոն և նրա էական տարբերությունը մյուս գործոններից: Հողասեփականությունը և հողօգտագործումը:

Հողի շուկա: Հողի նկատմամբ ածանցյալ առաջարկ և պահանջարկ: Հողի ոչ էլաստիկ առաջարկը: Դասական և ոչ դասական մոտեցումների տարբերությունը:

Ռենտայի փնտրեսագիտական բովանդակությունը: Հողային ռենտայի դասական մոտեցում: Քվազի ռենտա: Դիֆերենցիալ ռենտայի տեսություն: Հողի սահմանափակվածություն: Հողի բերրիության և տեղադիրքի տարբերությունները: Հողային ռենտայի նոր դասական մոտեցում: Ռենտան որպես գործոնային եկամուտ: Ռենտան որպես ծախս:

Հողի գինը: Հողի գնի պրոբլեմը տնտեսագիտության մեջ: Հողի գնի հաշվարկումը: Հողի տնտեսական գնահատումը և կադաստրը: Հողի օգտագործման տնտեսական արդյունավետության հիմնախնդիրները:

Ձեռնարկատիրական գործունեությունը և շահույթը

Ձեռնարկատիրական գործունեության էությունը: Ձեռնարկատիրական գործունեությունը որպես տնտեսավարման եղանակ: Ձեռնարկատիրությունը որպես արտադրության գործոն: Սեփականատիրոջ և ձեռներեցի տարանջատումը: Գործակալ և գործատեր պրոբլեմը: Ձեռներեցը, նրա ֆունկցիաները և տնտեսավարման սկզբունքները: Տնտեսական ռիսկի էությունը, տեսակները, գնահատման ցուցանիշները և ապահովագրությունը:

Ձեռնարկատիրական գործունեության փեսակները և ձևերը: Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպական և կազմակերպատիրական ձևերը: Ձեռնարկատիրական գործունեության տեսակները: Բաժնետիրական ընկերության էությունը: Բաժնետիրական ընկերությունների տեսակները:

Փոքր գործարարության առանձնահատկությունները: Ձեռնարկությունների տարբեր ձևերի առավելությունները և թերությունները:

Արտադրական ծախսերի և հատույթի բովանդակությունը: Այլընտրանքային ծախսեր: Հաստատուն ծախսեր: Հիմնական միջոցների մաշվածության տնտեսական բովանդակությունը և ձևերը: Ամորտիզացիան և նրա նորման: Արագացված ամորտիզացիայի հասկացությունը: Ամորտիզացիոն նորմայի մեծացման օպտիմալ սահմանը և տնտեսական արդյունավետությունը: Փոփոխուն ծախսեր: Համախառն ծախսեր (TC): Միջին ծախսեր (AC): Հաշվապահական (կամ արտաքին) և ներքին ծախսեր: Տնտեսական ծախսեր: Սահմանային ծախս (MC): Սահմանային ծախսերի նվազող հատույցի օրենքը: Համախառն հատույթ (TR): Սահմանային հատույթ (MR):

Շահույթի տնտեսագիտական բովանդակությունը: Շահույթը որպես գործոնային եկամուտ: Շահույթի ֆունկցիաները: Հաշվապահական և տնտեսական շահույթը: Ստատիկ վիճակի տնտեսությունը և տնտեսական շահույթը: Դինամիկ վիճակի տնտեսությունը և տնտեսական շահույթը:

Շուկայական մրցակցության մոդելները

Կատարյալ մրցակցությունը: Կատարյալ մրցակցության բնորոշ գծերը: $MC=AC=MR=P$: Առաջարկի և պահանջարկի կարճաժամկետ և երկարաժամկետ (SR և LR) հավասարակշռությունը: Հասույթը առավելագույնի հասցնելու խնդիրը:

Ոչ կատարյալ մրցակցության եղանակները և մեթոդները: Մոնոպոլիայի էությունը: Գինը և արտադրանքը մոնոպոլիայի պայմաններում: Հասույթը առավելագույնի հասցնելու խնդիրը: $MR+MC < AC < P$: Մոնոպոլ գնի ձևավորումը հարկերի և սուբսիդիաների դեպքում: Մասշտաբի էֆեկտը: Բնական մոնոպոլիա:

Օլիգոպոլիայի: Գինը և արտադրանքը օլիգոպոլիայի պայմաններում: Հասույթը առավելագույնի հասցնելու խնդիրը: Ասիմետրիկ ինֆորմացիայի պրոբլեմը:

Գների դիսկրիմինացիա: Օլիգոպոլիական մրցակցության մոդելները (ջարդված (խզված) կոր, գաղտնի համաձայնություն, գնային լիդերություն, ծախս+):

Մրցակցությունը տարբերակված արդյունքի արտադրության դեպքում:

Գինը և արտադրանքը մոնոպոլիայի պայմաններում: Հասույթը առավելագույնի հասցնելու խնդիրը:

Շուկայի կենտրոնացման գնահատման ձևերը (Լերների և Հերֆինդալի ինդեքսները):

Հակամենաշնորհային քաղաքականություն: Հակամենաշնորհային քաղաքականության էությունը և էվոլյուցիան: Հարկային լծակների օգտագործումը: Գնային քաղաքականության մշակում: Պետական ֆինանսավորման և արտոնյալ վարկավորման ճանապարհով մրցակից ձեռնարկությունների ձևավորում: Մրցակցային միջավայրի ձևավորում և կատարելագործում:

Եկամտի բաշխման տեսությունը

Եկամուտների բաշխման լծակները: Նվազագույն զամբյուղի հիմնախնդիրը: Սոցիալական բևեռացման հիմնախնդիրը: Սոցիալապես անապահով խավերը: Պետության սոցիալական քաղաքականությունը: Տրանսֆերտ վճարումների դերն ու նշանակությունը: Տրանսֆերտ վճարումների աղբյուրները:

Բնակչության եկամուտները և կենսամակարդակը: Բնակչության եկամուտների ձևավորման աղբյուրները: Եկամուտների կառուցվածքը՝ անվանական, տնօրինվող և իրական: Եկամուտների անհավասարությունը և սոցիալական արդարությանը: Աղքատության հիմնախնդիրը: Սոցիալական արդարության տեսությունները: Լորենցի կորը և Ջինիի գործակիցը: Բնակչության կենսամակարդակը և այն բնութագրող ցուցանիշները: Առողջապահական ծախսերը: Առողջապահության ստրատեգիան:

3. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ազգային տնտեսություն: Հիմնական արդյունքները և դրանց գնահատումը

Տնտեսության մակրոտնտեսական մակարդակը: Տնտեսական համակարգը որպես մեկ ամբողջություն: Մակրոտնտեսագիտությունը և տնտեսական համակարգի ընդհանուր օրինաչափությունները: Տնտեսական համակարգի ամբողջական գործունեության առանցքային ցուցանիշները (նախնական մոտեցումներ): Համախառն ազգային արդյունք (ՀԱԱ): Տնտեսական աճ: Գործազրկության: Ինֆլյացիա:

Համախառն ազգային արդյունք (ՀԱԱ): ՀԱԱ-ի բնութագրումը և կրկնահաշվարկից խուսափելու անհրաժեշտությունը: Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ): ՀԱԱ-ի հաշվարկման եղանակները: ՀԱԱ-ն ըստ ծախսերի և ըստ եկամուտների: ՀԱԱ-ի անվանական և իրական արժեքը: Դեֆլյատորի գաղափարը: Սպառողական գների ինդեքսի ոչ ճիշտ գնահատման ազդեցությունը իրական ՀՆԱ-ի մակարդակի գնահատման վրա: Ամբողջական պահանջարկը (AD) և նրա վրա ազդող գործոնները: Ամբողջական առաջարկը (AS) և նրա վրա ազդող գործոնները:

Փոխկապված ցուցանիշների համակարգը: Զուտ ազգային արդյունքը (ԶԱԱ): Ազգային եկամուտը (ԱԵ): Անձնական եկամուտը (ԱՆԵ): Տնօրինվող եկամուտը (ՏԵ): ՀԱԱ-ը և «զուտ տնտեսական բարեկեցությունը»: Ազգային հաշիվների համակարգը:

Ազգային հարստությունը և Օրա կառուցվածքը: Ազգային հարստության էությունը: Հասարակական և բնական հարստությունը: Վերարտադրվող և չվերարտադրվող հարստություն: Ազգային հարստության կազմը և կառուցվածքը:

Հարկաբյուջետային համակարգ

Բյուջեի տնտեսագիտական բովանդակությունը: Բյուջե հասկացությունը և նրա նշանակությանը: Բյուջեն և պետության ռազմավարական հիմնախաղի-

ները (Պետական անվտանգություն: Պաշտպանություն: Կրթության: Առողջապահություն: Բնապահպանություն: Սոցիալական պաշտպանություն և այլն): Բյուջեի եկամուտների և ծախսերի ուղղությունները: Հաշվեկշռված բյուջե: Բյուջեի դեֆիցիտը: «Արտամղման էֆեկտը» և բյուջեի դեֆիցիտը: Բյուջեի ավելցուկը:

Հարկի տնտեսագիտական բովանդակությունը: Հարկի բնութագրումը և դերը: Հարկման օբյեկտներ և սուբյեկտներ: Հարկման սկզբունքներ: Հարկային համակարգ: Հարկման դրույքաչափ: Հարկման բազա: Հարկի տեսակներ: Ուղղակի և անուղղակի հարկեր: Պրոգրեսիվ հարկ: Հարկման միջին դրույքաչափ: Հարկման սահմանային դրույքաչափ: Համամասնական հարկ: Ռեգրեսիվ հարկ: Հարկի ֆունկցիաները:

Պետության ֆիսկալ քաղաքականություն: Հարկային քաղաքականություն: Գործարար ակտիվության բարձրացումը: Լաֆֆերի կորը: Մաքսային քաղաքականություն: Բյաջետային քաղաքականություն: Դիսկրետ ֆիսկալ քաղաքականություն: Ընդլայնված ֆիսկալ քաղաքականություն: Զսպող ֆիսկալ քաղաքականություն: Ֆիսկալ քաղաքականության բազմապատկիչները և գների մակարդակը: Տնտեսության զարգացման առաջնահերթությունների և բյուջեի ծախսերի ուղղությունների ճշտումը:

Սպառում, խնայողություն և ինվեստիցիա

Սպառում և խնայողություն: Սպառման և խնայողության բովանդակությունը: Սպառման և խնայողության Քեյնսյան մոտեցումը: Սպառման ֆունկցիան: Սպառման և խնայողության հակումը և դրա վրա ազդող սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնները: Սպառման և խնայողության սահմանային հակումը:

Խնայողություն և ինվեստիցիա: Խնայողության և ինվեստիցիայի փոխադարձ կապի և հավասարակշռության դասական մոտեցումը: Խնայողության և ինվեստիցիայի ֆունկցիոնալ կախվածությունը տոկոսադրույքից: Խնայողության և ինվեստիցիայի Քեյնսյան մոտեցումը: Խնայողության ֆունկցիոնալ կախվածությունը եկամտի մակարդակից: Քեյնսյան խաչը: IS մոդելը որպես

հավասարակշռության վիճակի գնահատում:

Մուտիպլիկատոր և աքսելերատոր: Մուլտիպլիկատորի տնտեսական բովանդակությունը. գործակիցը: Փ.Սամուեանի և Զ.Հիքսի մոտեցումները: Աքսելերատորի բովանդակությունը: Խնայողության պարադոքսը: Զ. Քեյնսի «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատությունը:

Փողի շուկան և նրա էվոյուցիան: Բանկերը

Փողի բնույթի կերպավորությունը և նրա էվոյուցիան: Մետաղադրամային շրջանառության փոխարինումը թղթադրամային շրջանառությամբ: Մուրհակ, չեկ, վարկային փողեր: Անկանխիկ շրջանառություն: Փողի նյութաիրային և ոչ նյութաիրային բովանդակության հիմնահարցը: Շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակության որոշման դասական, մոնետարիստական և քենթրիջյան դպրոցի բանաձևերը: Հարստության փողային ձևի կամ լիկվիդայնության նկատմամբ հակումը: Լիկվիդայնության տրանսակցիոն, նախազգուշական և սպեկուլյատիվ մոտեցումները:

Վարկային հարաբերությունների բնույթը: Փոխատվությունը և վարկը: Վարկային ռեսուրսը: Վարկի էությունը: Վարկը որպես փողի դրսևորման ձև: Վարկավորման սկզբունքները: Վարկի ձևերը և ֆունկցիաները:

Բանկերը և նրանց գործառնությունները: Բանկային ինստիտուտի ձևավորման անհրաժեշտությունը: Բանկային համակարգը: Կենտրոնական բանկը որպես բանկային համակարգի գլխավոր օղակ: Բանկի ֆունկցիաները: Առևտրային բանկերի գործունեությունը և դրա կարգավորումը: Ավանդի ընդարձակման մուլտիպլիկատորը: Բանկային պահուստները:

Հավասարակշռությունը փողի շուկայում: Փողի ագրեգատները՝ M1, M2, M3: Փողի պահանջարկը և առաջարկը: Դասական մոտեցումը: Քեյնսյան մոտեցումը: Փողի պահանջարկի և առաջարկի կորերը: LM մոդելը: Իրացվելիության (լիկվիդայնության) ծուղակը: Մոնետարիստական մոտեցումը: Ֆրիդմանի բանաձևը: Փողի քանակության ազդեցությունը արտադրության ծավալի վրա:

Պետության դրամավարկային քաղաքականությունը: Դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները: Կենտրոնական բանկի հիմնական միջոցառումները և ՄԻ կարգավորումը: ՄԻ փոփոխության կարճաժամկետ և երկարաժամկետ էֆեկտները: Տոկոսադրույքի կարգավորումը և սահմանները: Փողային շուկայի հավասարակշռության պետական կարգավորումը: Դրամավարկային փոխանցման մեխանիզմը:

Ռազմավարական նշանակության ոլորտների վարկավորման նպաստավոր պայմանների ստեղծումը: Նպաստավոր տոկոսադրույքի քաղաքականության իրագործումը և ինվեստիցիայի խթանումը: Ադապտիվ և ռացիոնալ սպասումների վարկածը:

Տնտեսական աճի և հավասարակշռության տեսությունը

Տնտեսական աճի էությունը: Տնտեսական զարգացում և տնտեսական աճ հասկացությունները: Տնտեսական աճի գնահատումը: Տնտեսական աճի տիպերը: Տնտեսական աճի տեմպը: Տնտեսական զարգացման մակարդակի գնահատման չափանիշները: Տնտեսական արդյունավետության ցուցանիշները:

Տնտեսական աճի գործոնները: Տնտեսական աճի գործոնների դասակարգումը: Պահանջարկի և առաջարկի գործոնները: Էքստենսիվ և ինտենսիվ գործոններ: Տնտեսական առաջընթացի շարժիչ մոտիվները: Գիտատեխնիկական առաջընթացը որպես տնտեսական աճի կարևոր գործոն:

Տնտեսական աճի տեսությունները: Տնտեսական աճի դասական և նոր դասական տեսությունները: Տնտեսական աճի Քեյնսյան տեսությունը: Քեյնսի արդյունավետ պահանջարկի տեսությունը: Տնտեսական աճի մոդելները: Քոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիան: Հարոդ-Դոմարի տեսությունը: Սոլոուի տնտեսական աճի մոդելը: «Ձրոյական տնտեսական աճի» տեսությունը: Գիտատեխնիկական պեսիմիզմի տեսությունը:

Տնտեսական աճի հավասարակշռությունը: Ֆ.Քենեի տնտեսական աղյուսակը: Տնտեսական հավասարակշռության դասական ու նոր դասական

մոտեցումները: Ռեսուրսների լրիվ զբաղվածությունը և հավասարակշռության վիճակի դասական և նոր դասական մոտեցումները: Վայրասի հավասարակշռության մոդելը: Դասական տեսության Քեյնսյան մեկնաբանությունը: Հավասարակշռության վիճակի Քեյնսյան տեսությունը: Զ. Հիքսի IS-LM մոդելը: Վ. Լեոնտևի «ծախսեր-արդյունքներ» մոդելը և միջոյուղային հաշվեկշիռը: «Ամբողջական պահանջարկ-ամբողջական առաջարկ» (AD-AS) մակրոտնտեսական հավասարակշռության մոդելը:

Տնտեսական կայունությունը և տնտեսության ցիկլային զարգացումը

Տնտեսական կայունության էությունը: Կայուն տնտեսական աճի ապահովման խնդիրը: Տնտեսական անկումը և սրա ներքին (ինտերնալ) և արտաքին (էքստերնալ) պատճառները: Տնտեսական անկման Քեյնսյան մեկնաբանությունը: Տնտեսական կարգավորման լիբերալ-շուկայական մոդելի հնարավորությունների սահմանափակության հիմնախնդիրը և տնտեսական անկումը: Ֆրիդմանի տեսությունը: Տնտեսական աճի հավասարակշռության խախտումը և տնտեսական անկումը:

Տնտեսական ցիկլ: Տնտեսական ցիկլը, նրա ձևավորման օրինաչափությունները և փուլերը: Անկման փուլը և նրա առանձնահատկությունները: Լճացման (դեպրեսիայի) փուլը և նրա առանձնահատկությունները: Աշխուժացման փուլը և նրա առանձնահատկությունները: Վերելքի փուլը և նրա առանձնահատկությունները:

Տնտեսական ցիկլերի տեսությունները: Տնտեսական ցիկլերի տեսակները: Կոնդրատևի մեծ ցիկլերի տեսությունը: Մեծ ցիկլերի առաջացման պատճառները:

Հակացիկլային քաղաքականություն: Ֆիսկալ, դրամավարկային միջոցառումները: Տնտեսության ռազմավարական ճյուղերի և նոր արտադրությունների զարգացման հեռանկարների գնահատման կարևորությունը: Դրան համապատասխան քաղաքականության մշակումը: Հակացիկլային կարգավորման մոտեցումները:

Ինֆլյացիան և հակաինֆլյացիոն քաղաքականությունը

Ինֆլյացիայի էությունը: Ինֆլյացիայի բնութագրումը. պատճառները: Տնտեսական աճը և ինֆլյացիան: Դրամաշրջանառությունը և ինֆլյացիան: Տնտեսական հավասարակշռության իրավիճակի խախտումը և ինֆլյացիան: Բյուջեի դեֆիցիտը և ինֆլյացիան: Ինֆլյացիոն սպասումը: Արտաքին շուկայի ազդեցությունը ինֆլյացիայի վրա: Ինֆլյացիայի հաշվարկումը:

Ինֆլյացիայի տեսակները: Պահանջարկի և ծախսերի ինֆլյացիա: Սողացող, քառատրոփ և հիպեր ինֆլյացիա: Ստազֆլյացիա: Կանխատեսելի և անկանխատեսելի ինֆլյացիա:

Ինֆլյացիայի հետևանքները: Չափավոր ինֆլյացիան և տնտեսական աճը: Տնտեսական կապերի խզումը: Հարկային մուտքերի արժեզրկումը: Խնայողությունների արժեզրկումը: Բանկային համակարգի կորուստները: Դրամաշրջանառության կազմալուծումը: Սպասողական իրավիճակի ձևավորումը: Գործարար ակտիվության նվազումը: Եկամուտների վերաբաշխումը: Սոցիալական բևեռացման խորացումը: Ֆիլիպսի կորը: Ֆիլիպսի կորի մոնետարիստական մեկնաբանությունը:

Հակաինֆլյացիոն քաղաքականություն: Հարկաբյուջետային միջոցառումները: Դրամավարկային միջոցառումները:

Զբաղվածության հիմնախնդիրները և գործազրկությունը

Զբաղվածության հիմնախնդիրը: Զբաղվածությունն իբրև տնտեսական աճի գործոն: Զբաղվածության սոցիալական բնույթը: Զբաղվածության և աշխատավարձի հարաբերակցության տեսությունները:

Գործազրկություն: Գործազրկության էությունը և հետևանքները: Գործազրկության պատճառները: Տնտեսական աճը և գործազրկությունը: Տնտեսական հավասարակշռության վիճակի խախտումը և գործազրկությունը: Ռեսուրսների լրիվ զբաղվածության խնդիրը և գործազրկությունը: Քեյնսի արդյունավետ պահանջարկի տեսությունը և գործազրկությունը: Գործազրկու-

յան ձևերը: Ֆրիկցիոն, կառուցվածքային, հարկադրական, կամավոր, ցիկլային գործազրկություն: Բնական գործազրկություն: Գործազրկության «բնական մակարդակիտ մոնետարիստական վարկածը: Օուքենի օրենքը:

Ջբաղվածության կարգավորումը: Ինվեստիցիայի խթանումը և պետության ինվեստիցիոն քաղաքականությունը: Քեյնսյան զբաղվածության ֆունկցիան: Արդյունավետ պահանջարկի պետական կարգավորումը և զբաղվածությունը: Կայուն տնտեսական աճի ապահովումը և զբաղվածությունը:

Տնտեսության պետական կարգավորումը

Տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը: Դասական և նոր դասական մոտեցումը: Շուկայական ինքնակարգավորման սկզբունքների անկատարության դրսևորումները: Պետության տնտեսագիտական բովանդակությունը (հասարակական բարիք, մոնոպոլիա, արտաքին տնտեսական ազդակներ, տնտեսական անհավասարակշռություն): Հասարակական ընտրության քաղաքական շուկան: Քաղաքական հավասարակշռությունը և նրա երկու տիպերը: Բյուրոկրատիա: Ռացիոնալ անտեղյակություն: Պետության «չափերիտ մեծացումը: Տնտեսության պետական կարգավորման հնարավորությունները և սահմանները:

Հասարակական բարիքի արդադրությունը: Հասարակական բարիքի առանձնահատկությունը: Պաշտպանական նշանակության արդյունքների արտադրությունը, ճանապարհների, կոմունիկացիոն նշանակության օբյեկտների կառուցումը: Տրանսակցիոն ծախսերի նվազեցումը:

Բնապահպանական քաղաքականություն: Էկոլոգիական հավասարակշռության պահպանման խնդիրը: Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը: Բուսական և կենդանական աշխարհի պահպանման դժվարությունները: Արտաքին ծախսը: Դ. Նորթի «Ինստիտուտներ, ինստիտուցիոնալ փոփոխություններ և տնտեսական գործունեություն» աշխատությունը: Ռ. Քոուզի «Ընկերության բնույթը» աշխատությունը:

Տնտեսական համակարգերի էվոյուցիան

Տնտեսական համակարգերի տիպաբանությունը: Բնատնտեսություն: Շուկայական համակարգը և հորիզոնական կորորինացիան: Ինստիտուցիոնալիզմի տեսությունը: Վարչակենտրոնացված (հրամայական) համակարգը և ուղղահայաց կորորինացիան: Տնտեսական համակարգի ազգային դրսևորումները (ամերիկյան, շվեդական, գերմանական, ճապոնական, հայկական և այլն):

Անցումային շրջանի տնտեսական համակարգը: Անցման շրջանի հիմնական առանձնահատկությունները: Տնտեսական համակարգի կերպափոխման այլընտրանքային տարբերակները: Տնտեսական բարեփոխումների ուղղությունները անցումային տնտեսություններում: Տնտեսական բարեփոխումների տևականությունը, հաջորդականությունը, փուլայնությունը: Օրենսդրական հիմքերի ստեղծումը: Ապապետականացում: Մակրոտնտեսական կայունություն: Շուկայական կառուցվածքների և ենթակառուցվածքների ձևավորումը: Տնտեսության կառուցվածքային, ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ վերափոխումներ: «Շուկային թերապիայի» և «գրադուալիստական մոտեցումները»: Ռ. Քոուզի «Ընկերություն, շուկա և իրավունք» աշխատությունը:

Միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգը

Համաշխարհային տնտեսության ձևավորման հիմքերը: Աշխատանքի միջազգային բաժանումը և մասնագիտացումը: Ազգային տնտեսությունների մերձեցման տնտեսական գործոնները: Համաշխարհային տնտեսության կառուցվածքը և երկրների դասակարգման խմբերը:

Համաշխարհային առևտուր: Արտաքին առևտրի անհրաժեշտությունը և արդյունավետությունը: Արտաքին առևտրի քաղաքականությունը: Առևտրային և վճարային հաշվեկշիռ: Միջազգային առևտրի տեսությունները: Ա.Սմիթի և Դ Ռիկարդոյի մոտեցումները մրցակցային առավելությունների մասին: Հեկշեր– Օհիլնի և Մ.Պորտերի մրցակցային առավելությունների կոնցեպցիաները: Լեոնտևի պարադոքս:

Արդարության գործոնների միջազգային շարժը: Կապիտալի միջազգային շարժի էությունը և ձևերը: Կապիտալի արտահանման տնտեսագիտական տեսությունները: Աշխատանքային ռեսուրսների միջազգային միգրացիան: Միգրացիայի հիմնական պատճառները:

Միջազգային վալյուտային հարաբերությունները: Վալյուտային հարաբերությունների բովանդակությունը: Վալյուտայի կուրս հասկացությունը: Կուրսի վրա ազդող գործոնները: Միջազգային վալյուտային համակարգը և նրա էվոլյուցիան: Միջազգային ֆինանսական կազմակերպությունները:

Միջազգային տնտեսական ինտեգրացիան: Տնտեսական ինտեգրացիայի էությունը, փուլերը և դրսևորման ձևերը: Գլոբալիզացիան և զարգացող երկրների հիմնախնդիրները: Տնտեսական ինտեգրացիոն համակարգերը և միջազգային մրցակցությունը: Միջազգային տնտեսական ինտեգրացիայի տեսությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, Գ.Ե. Կիրակոսյանի և Ի.Ե.Խլիլայանի ընդհ. խմբ., Եր., Տնտեսագետ, 2009, 752 էջ
2. Տնտեսագիտություն, մասնավոր և հասարակական ընտրություն, Զ. Գոռթնի, Ռ. Ստրոուպ, Ա.Սոուդենմունդի, Ռ.Սորբելի, Եր., Տնտեսագետ, 2003, 1152 էջ
3. Ընդհանուր տնտեսագիտություն: Նվազագույն գիտելիքներ հարստության և բարեկեցության մասին, Զ. Գոռթնի, Ռ. Ստրոուպ, Դ.Լի, Թ.Ֆերարինի, Եր., Տիգրան Մեծ, 2013, 288 էջ
4. Մարկոսյան Ա.Խ., Շուկայական տնտեսության հիմունքները, Եր., Տիգրան Մեծ, 2002, 479 էջ
5. Աղաջանյան Հ.Ի., Տնտեսագիտության տեսություն, ուս. ձեռնարկ: Ե. 2009
6. Սամուելսոն Փ., Նորդհաուս Ու., Տնտեսագիտություն, Ե., 1995
7. Մենքլու Գ., Մակրոէկոնոմիկա, Հ.Բ.Ղուշյանի ընդհ. խմբ. Ե., 1997, 443 էջ
8. Աղաջանյան Հ.Ի., Պետությունը և տնտեսությունը, Ե., 2004, 400 էջ
9. Զբաղվածության, փողի և տոկոսի ընդհանուր տեսություն, Զ. Քեյնս, Ա.Մարկոսյանի և Ա.Դավոյանի ընդհ. խմբ., Ե., Տիգրան Մեծ 2006, 389 էջ
10. Փոլ Հեյնե, Տնտեսագիտական մտածելակեց, Ա.Մարկոսյանի ընդհ. խմբ.

Երևան, Էդիթ Պրինտ, 2008, 686էջ

11. Борисов Е.Ф., Экономическая теория: Учебник, Москва: Юрайт-Издат, 2005. 399 стр.
12. Курс экономической теории: Общие основы экономической теории. Микроэкономика. Макроэкономика. Основы национальной экономики: Уч. пособие/ под. ред. А. В. Сидоровича, М., Дело и сервис, 2001, 832 стр.
13. Курс экономической теории: Учебник для бузов обучающихся по экономическим цпециальностям и направлениям; Под общ. Ред. М.Н.Чепурина, Е.А.Киселевой, Киров, АСА 2011, 880 стр.
14. Линвуд Г. Гайгер, Макроэкономическая теория и переходная экономика, М., 1996
15. Липсиц И.В., Экономика: Учебник для вузов. М.: Омега-Л, 2006, 656 ст.
16. Марк Блауг, Методология экономической науки, или как экономисты объясняют. М. 2004, 416 ст.
17. Сажина М.А., Экономическая теория: уч. для вузов. М., Норма-2007.672 ст.
18. Фишер С., Дорнбуш Р., Шмалензи Р., Экономика: Пер. с англ. Со 2-го изд. М.: Дело ЛТД, 1995 864 стр.
19. Экономика: Учебник, под ред. А.С.Булатова, М., Экономисть, 2003. 896 ст.
20. Экономическая теория, Учебник/ под общ. ред. В. И. Видяпина, А.И.Добрынина, Г.П. Журавлевой, М., ИНФРА-М, 2008
21. Экономическая теория/ Под ред. Дж.Итуэлла, М.Милгрейта, П.Ньюмена, Пер. с англ. Москва, ИНФРА-М, 2004. 931 стр.
22. Экономическая теория: Учебник для студентов бузов: Под ред. В.Д.Камаева; Москва 2003. 592 стр.
23. Ядгаров Я.С., История экономических учений, М., ИНФРА-М, 2009, 480ст.

**Ը.00.02 – ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

1. ՄԱԿՐՈՒԷԿՈՆՈՄԻԿԱ

Մակրոտնտեսական հիմնական հասկացությունները և ցուցանիշները.

Մակրոտնտեսական բնութագրերը տնտեսական աճ, ինֆլյացիա, գործազրկություն: Մակրոտնտեսական ցուցանիշները՝ ՀՆԱ, ՀԱԱ, ԶԱԱ, ԱԵ, անձնական եկամուտ, տնօրինվող անձնական եկամուտ: ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդները և կանոնները: ՀԱԱ-ի և ՀՆԱ-ի հաշվարկման առանձնահատկությունները: Անվանական և իրական, պոտենցիալ և փաստացի ՀՆԱ: ՀՆԱ-ի դեֆլատորը և ՍԳԻ-ն: Լայսպերեսի և Պաաշեի ինդեքսները:

Ազգային եկամտի արտադրությունը և բաշխումը.

Արտադրական ֆունկցիաները և արտադրության ծավալի հաշվարկումը: Ձեռնարկության պահանջարկը արտադրության գործոնների նկատմամբ: Ազգային եկամտի բաշխումը: Կոր-Դուգլասի արտադրական ֆունկցիան: Հավասարակշռությունը ապրանքների, ծառայությունների և ֆինանսական շուկաներում, տոկոսադրույքը: Ապրանքների և ծառայությունների պահանջարկը: Սպառումը և խնայողությունները: Սպառման ֆունկցիան: Սպառման տեսությունները և դրանց հիմնական տարբերությունները: Զուտ և համախառն ներդրումներ: Ներդրումները և տոկոսադրույքը:

Տնտեսական աճ. Տնտեսական աճ հասկացությունը: Տնտեսական աճի ցուցանիշները: Տնտեսական աճի վրա ազդող գործոնները: Կոր-Դուգլասի ֆունկցիան և տնտեսական աճի հաշվարկը: Տնտեսական աճի մոդելներ: Էնդոգեն և էկզոգեն փոփոխականներ: Հարող-Դոմարի և Սոլոուի-Լեոնտևի մոդելների ներածություն: Կայուն համաչափ աճի հայեցակարգերը և փաստական ապացույցները: Վերլուծության նախադրյալները: կապիտալի կուտակումը: Կապիտալի պաշարի հաստատուն մակարդակը և տնտեսության հավասարակշռությունը: Խնայողությունների նորմայի փոփոխությունը և

տնտեսական աճի տեմպերը: Կապիտալի պաշարի ընտրության «Ոսկի կանոնը»: Կայուն իրավիճակների համեմատությունը: «Ոսկի կանոնին» համապատասխանող կայուն իրավիճակը:

Բնակչության աճը: Մարդկային կապիտալի հիմնահարցը: «Ոսկի կանոնը» բնակչության աճի պայմաններում: Տեխնիկական առաջընթացը: Աշխատանքի արդյունավետությունը: Տնտեսական աճի տեմպերը տեխնիկական առաջընթացի պայմաններում: Խնայողությունները, աճը և տնտեսական քաղաքականությունը: Տնտեսական աճի տեմպերի կանխատեսումը նոր քեյնսյան մոդելների օգնությամբ (Դոմարի, Հարրոդի մոդելներ): Տնտեսական աճի կանխատեսումը նոր դասական մոդելների օգնությամբ (Սոլոուի մոդել): Կալդորի, Ռոբինսոնի, Դենիսոնի, Լյուիսի, Էրրոուի, Փ. Ռոմերի, Թինբերգենի և MRW տնտեսական աճի մոդելները:

Գործազրկություն, ինֆլյացիա, փող. Գործազրկության տեսակները: Գործազրկության ցուցանիշները: Սպասման գործազրկություն: Հավասարակշռությունը աշխատանքի շուկայում: Փողի էությունը և ազդեցատները: Փողի քանակական տեսություն: Անվանական և իրական տոկոսադրույք, ինֆլյացիա: Ֆիշերի հավասարում: Փողի առաջարկ: Փողի առաջարկի մոդելը: Փողի պահանջարկ: Բաումոլ-Թոբինի մոդել: Հակաինֆլյացիոն քաղաքականություն:

Բաց տնտեսության զարգացման օրինաչափությունները. Փոքր տնտեսության մոդելը: Կապիտալի և ապրանքների միջպետական հոսքերը: Երկրի վճարային հաշվեկշիռը: Վճարային հաշվեկշռի կարգավորման հիմնախնդիրները, վճարային հաշվեկշռի կարգավորման մակրոտնտեսական մոդելները: Փոխանակային կուրսերը և դրանց վրա ազդող գործոնները: Տնտեսական քաղաքականության ազդեցությունը փոքր բաց տնտեսության վրա: Փոքր բաց տնտեսությունը կարճ ժամկետում: Մանդել-Ֆլեմինգի մոդելը: Տնտեսական քաղաքականության ազդեցության գնահատումը հաստատագրված և լողացող փոխանակային կուրսերի դեպքում Մանդել-Ֆլեմինգի մոդելի միջոցով: TNT մոդելը:

Տնտեսական տատանումներ: Կարճաժամկետ վերլուծություն:

IS-LM մոդելը. Հավասարակշռությունը ապրանքների և ծառայությունների շուկայում՝ IS կորը: Հավասարակշռությունը փողի շուկայում՝ LM կորը: Կարճաժամկետ հավասարակշռություն՝ IS-LM մոդելը: Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ազդեցությունը IS-LM-ի վրա: Անցումը կարճաժամկետ վերլուծություններից երկարաժամկետի: Մեծ ճգնաժամի վերլուծությունը IS-LM մոդելի միջոցով: Տնտեսական տատանումների հիմնախնդիրը և դրա ներկայացումը դասական և քեյնսյան դպրոցների ներկայացուցիչների կողմից: Տնտեսական պարբերաշրջանների տեսությունները: Պարզ և բարդ բազմարկիչների քեյնսյան մոդելները:

Ամբողջական առաջարկ. Ամբողջական առաջարկի 4 մոդելները: Գործազրկության և ինֆլյացիայի կապը: Ֆիլիպսի կորը: Քեյնսականների և դասականների մոտեցումները ամբողջական առաջարկի նկատմամբ: Իրական տնտեսական պարբերաշրջանի տեսությունը:

Տնտեսական զարգացման ազգային ծրագրերը և դրանց մշակման կարգը. Տնտեսական զարգացման ծրագրերը: Հիմնական ցուցանիշները: Գիտատեխնիկական առաջադիմության ծրագիրը: Սոցիալական զարգացման ծրագիրը: Նյութական արտադրության ճյուղերի զարգացման ծրագրերը: Տնտեսական ծրագրերի ռեսուրսային ապահովումը: Աշխատանքային ռեսուրսների օգտագործման պետական կարգավորումը: Տնտեսական ծրագրերի հիմնական տիպերը: Սահմանափակ և անսահմանափակ հորզոնով ծրագրեր: Հաշվեկշռված աճի ծրագրեր: Մայրուղային աճի ծրագրեր:

«Վակրոտնտեսական կարգավորման պետական մարմինները, դրանց գործառույթները. «Վ կառավարման մարմինների կազմակերպական կառուցվածքը: «Վ նախագահի, «Վ ԱԺ-ի, «Վ կառավարության գործառույթները մակրոտնտեսական կարգավորման գործում: «Վ ֆինանսների, «Վ ներդրումներ և տնտեսական զարգացման նախարարությունների, «Վ պետական եկամուտների կոմիտեի, ճյուղային նախարարությունների ու

գերատեսչությունների կառուցվածքը և գործառույթները:

Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները.

Պետության եկամուտները և ծախսերը: Պետական եկամուտների և ծախսերի պարզ և բարդ բաղադրիչները: Պետբյուջե: Պետական պարտք: Կայունացնող քաղաքականություն: Ակտիվ և պասիվ տնտեսական քաղաքականություն: Մակրոտնտեսական հավասարակշռություն: ՀՀ հարկային օրենսդրությունը: Հիմնական հարկատեսակները և դրանց դասակարգումը: Հարկային խթանող քաղաքականությունը: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը: ՀՀ պետական բյուջեի ծախսերի ուղղությունները և կառուցվածքը: Դրամավարկային քաղաքականության էությունը: ՀՀ բանկային համակարգը, ԿԲ-ի գործառույթները:

Արտաքին տնտեսական քաղաքականությունը. Արտաքին տնտեսական հարաբերությունների էությունը և հիմնական ձևերը: Ազատ առևտրի և հովանավորչական քաղաքականությունները: Տնտեսական քաղաքականության ազդեցությունը արտաքին առևտրի վրա: Արտաքին առևտրի դասական տեսությունների ընդհանուր բնութագիրը: Ստոլպեր-Սամուելսոնի տեսությունը: Ռիբչինսկու տեսությունը: Արտաքին առևտրի նոր և նորագույն տեսությունները և մեկնաբանությունները: Լեոնտևի պարադոքսը և դրա բացատրությունները: ՀՀ արտաքին տնտեսական կապերի բնույթը: Համաշխարհային գնի ձևավորման տեսությունները: ՀՀ արտաքին առևտրի զարգացման հնարավորությունները և ուղղությունները:

Գլոբալացումը և համաշխարհային տնտեսությունը. Գլոբալացման էությունը և նախադրյալները: Գլոբալացման դրական և բացասական ազդեցությունը ազգային տնտեսությունների վրա: Անդրազգային կորպորացիաների դերը գլոբալացման գործընթացում:

ՀՀ ներդրումային քաղաքականությունը. Ներդրումային քաղաքականության էությունը, խնդիրները: Ներդրումների աղբյուրները: Մասնավոր ներդրումների խթանման լծակները: Ներդրումների տեսակները և ձևերը: Ներ-

դրումների տնտեսական արդյունավետության գնահատումը: ՀՀ ներդրումային միջավայրը և նրա առանձնահատկությունները: Ներդրումների կառուցվածքը: Ներդրումների պետական կարգավորման մոդելները:

ՀՀ սոցիալական քաղաքականությունը. Բնակչության կենսամակարդակի պետական կարգավորման անհրաժեշտությունը: Սոցիալական ծրագրերը, դրանց բաժիններն ու ցուցանիշները: Բնակչության իրական եկամուտների պետական կարգավորումը: Պետական քաղաքականությունը առողջապահության, կրթության և գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում:

Պետության տարածքային քաղաքականությունը. ՀՀ վարչատարածքային կառուցվածքը: Մարզպետարանների գործառույթները և խնդիրները տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառում: Տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը, բաժինները և ցուցանիշները: Տեղական ինքնակառավարման մարմինները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մակրոտնտեսական կարգավորում, ուս. ձեռնարկ, Ղուչյան Հ.Բ ընդհ. խմբագրությամբ և ղեկավարությամբ, Եր., Տնտեսագետ, 2005, 610 էջ
2. Մենքյու Գ., Մակրոէկոնոմիկա, Հ.Բ.Ղուչյանի ընդհ. խմբ. Ե., Հայաստան, 1997, 443 էջ
3. Տնտեսագիտություն, մասնավոր և հասարակական ընտրություն, Զ. Գոռթնի, Ռ. Ստրոուպ, Ա.Սոուդենմունդի, Ռ.Սոբելի, Ե., 2003, 1152 էջ
4. Գրիգորյան Կ. Հ., Մակրոտնտեսական նորագույն մշակումներ, ուս. ձեռնարկ, Եր., Տնտեսագետ, 2009, 172 էջ
5. Սամուելսոն Փ., Նորդիաուս Ու. Տնտեսագիտություն, հ. 1, 1995, 536 էջ
6. Սաքս Զ., Լարրեյն Ֆ., Մակրոտնտեսագիտությունը գլոբալ տնտեսությունում, Եր., Տնտեսագետ, 2002, 584 էջ
7. Абель Э., Бернанке Б., Макроэкономика. 5 изд. СПб.: Питер, 2010. 768с.
8. Агапова Т.А., Серегина С.Ф., Макроэкономика: Учебник, Москва: Изд-во Дело и сервис, 2004. 448 стр.
9. Антонова Н.Б., Государственное регулирование экономики, учебник, Минск, 2002, 775ст.

10. Базилевич В., Базилевич К., Баластрик Л., Макроэкономика. Учебник. 2005. 423 ст.
11. Государственное регулирование экономики: Уч. Пособие для вузов/ Т.Г.Морозова, Ю.М. Дурдыев, В.Ф. Тихонов и др., М. ЮНИТИ-ДАНА, 2002, 255 стр.
12. Дорнбуш Р., Фишер С., Макроэкономика, М. ИНФРА-М,1997, 784 ст.
13. Ивашковский С.Н., Макроэкономика: Учебник. М.: Дело, 2002. 472 стр.
14. Капканщиков С.Г., Государственное регулирование экономики, 2010 г.
15. Климов С.М., Селин А.П., Феодорова Т.А., Макроэкономика, С.Пб., 2008
16. Кучуков Р. А., Теория и практика государственного регулирования экономических и социальных процессов, 2010 г.
17. Кушлин В.И., Государственное регулирование рыночной экономики, Учебник/ М.: Издательство РГАС, 2005. - 825 с.
18. Макроэкономика: практикум / Р.М. Нуреев; Под ред. Р.М. Нуреева. - М.: Норма: НИЦ ИНФРА-М, 2015. - 400 с.
19. Макроэкономика: уч. Пос./ Б. Т. Кузнецов. М.: ЮНИТИ-ДАНА,2011,458 с.
20. Макроэкономика. Теория. Практика. Безопасность: учебник / А. А. Анисимов, Н. В. Артемьев, О. Б. Тихонова; ред. Е. Н. Барикаев. - М.: ЮНИТИ-ДАНА, 2011, 598 с.
21. Маттвеева Т.Ю., Введение в макроэкономику, Уч. пособие. М.: Изд. дом ГУ ВШЭ, 2007. - 511 с
22. Бланшар О., Макроэкономика. М.: 2010. - 672 с.
23. Орешин В.П., Государственное регулирование национальной экономики, М., 2000г.
24. Протас В.Ф., Макроэкономика: структурно-логические схемы: Уч.пособие для вузов - М.: Банки и биржи , 1997. – 271 с.
25. Стиглиц Дж. Ю., Экономика государственного сектора, М. Изд-во МГУ: ИНФРА-М, 1997. 720 стр.
26. Тарасевич Л.С., Гребенников П.И., Леусский А.И., Макроэкономика, Учебник, Москва, Высшее образование, 2006, 654 стр.
27. Чиповская И.С., Левченко Т.А. Макроэкономика, Уч. пособие. – Владивосток: Изд-во ДВГТУ, 2007. – 224 стр.
28. Шерер Ф., Росс Д., Структура отраслевых рынков: Пер. с англ.- Москва: ИНФРА-М, 1997, 698 стр.
29. Burda M., Wyplosz Ch., Macroeconomics, Oxford University Press, 2001
30. David Romer, Advanced macroeconomics, McGraw-Hill, 1996, 550 p.

2. ՄԻԿՐՈԷԿՈՆՈՄԻԿԱ

Ձեռնարկությունը և ձեռնարկատիրական գործունեությունը.

Ձեռնարկությունների բնութագիրը, առանձնահատկությունները, նպատակներն ու խնդիրները: Ձեռնարկության ապրանքային քաղաքականությունը: Առևտուրը որպես ապրանք արտադրողների սպառողների միջև կապի հիմնական ձև: Պետության դերը արտադրության կարգավորման գործում: Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման էությունը, սուբյեկտները, ձևերը և տեսակները, խնդիրները, ոլորտները և մասշտաբները: Ձեռնարկատիրության տեսամեթոդական հիմքերը: Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման կիրառական խնդիրները: Ձեռնարկությունները (ֆիրմաները, կազմակերպությունները) որպես շուկայական օբյեկտ, դրանց բնորոշ գծերը, դասակարգման հատկանիշները: Ձեռնարկության տեխնոլոգիական պայմանագրային և ռազմավարական հիմնադրույթները: Ձեռնարկության հորիզոնական և ուղղահայաց սահմանները: Ֆիրմայի զարգացման պայմանների օպտիմալացումը: Ձեռնարկության տիպաչափերը և դասակարգման հատկանիշները, կազմակերպման ձևերը, նպատակները, կառավարման կառուցվածքը: Կազմակերպությունների նպատակների ընտրության հիմնախնդիրները, շահույթի մաքսիմալացումը, այլընտրանքային նպատակները: Պատվիրատու-կատարող, գործակալ-ֆիրմաներ հարաբերությունների դրսևորումները և մոդելավորումը շուկայական տարբեր մոդելների պայմաններում:

Ձեռնարկատիրական գործունեության ոլորտի ընտրությունը: Ձեռնարկատիրական կապիտալը և դրա ձևավորման մեխանիզմը: Ձեռներեցության միջավայրի ձևավորման հիմնական տարրերը: Փոքր ձեռներեցության արդի հիմնահարցերը: Խոշորամասշտաբ ձեռնարկատիրության տեսակները, խնդիրները, դրանց միջև փոխներգործության մեխանիզմը և զուգակցման հնարավորությունները: Ձեռնարկատիրության կազմակերպման իրավական հիմքերը: Ձեռնարկատիրության վիճակը և զարգացման միտումները ՀՀ-ում:

Փոքր, միջին և խոշոր ձեռնարկությունների տնտեսական աճի ռազմավարությունը: Պատճենահանում, ֆրանչայզինգ, լիակատար ազատություն, լիզինգ: ՓՄՁ պետական աջակցության ծրագիրը ՀՀ-ում:

Ձեռնարկությունը և շուկան. Ձեռնարկության ապրանքային արտադրությունը: Ձեռնարկության արդյունաբերական քաղաքականությունը և դրա իրականացման մեխանիզմը, ձեռնարկության ապրանքային քաղաքականությունը: Ապրանքաշուկայի ձևավորումը: Շուկայական մոդելները և դրանց ազդեցությունը ձեռնարկության կենսագործունեության վրա: Միջնորդությունը որպես ապրանքարտադրողի և առաքիչի միջև կապի ձև և ձեռնարկատիրական գործունեության տեսակ: Շուկայի կոնյուկտուրայի էությունը, ձևավորող գործոնների դասակարգումը, վերլուծությունը, գնահատումը և մոդելավորումը: Ձեռնարկության վարքագծի վերլուծությունն ու մոդելավորումը: Ներքին շուկան և դրա սահմանափակվածությունը: Շուկայի սահմանները: Մենաշնորհային շուկան: Ապրանքազանգվածի շարժման պետական կարգավորումը: Շուկաների դասակարգումը ըստ գործարքների օբյեկտի, գործունեության պայմանների, գործարքների լոկալացման աստիճանի, փոխներգործունեության տիպերի և փոխներգործունեության ձևերի: Շուկաների նույնականացումը (ապրանքային, ժամանակային, լոկալային): Շուկաները և ճյուղերի հարաբերակցությունը: Տնտեսության ճյուղային կառուցվածքը բնութագրող գործոնների վարքագծի վերլուծության մակարդակը, պատահական գործոններ, ուղղահայաց ինտեգրացումը, թափանցման արգելքները, կառավարության քաղաքականությունը: Արդյունաբերական քաղաքականությունը ձեռնարկությունում և դրա իրականացման մեխանիզմը: Ձեռնարկության կազմը, կառուցվածքը, կառուցվածքի կատարելագործման միտումները ՀՀ-ում: Ձեռնարկության ներքին և արտաքին միջավայրը, դրանք բնութագրող գործոնները: Ձեռնարկության տնտեսական գործունեության վրա ներքին և արտաքին գործոնների փոխներգործունեության գնահատումը: Ձեռնարկության տնտեսական ռազմավարությունը, էությունը, մշակման մեթոդները,

ձեռնարկության կենսացիկլը: Ձեռնարկության ադապտավորումը շուկայի պայմաններին: Ձեռնարկության ադապտավորման պրոբլեմները: Ձեռնարկության անկարողությունը (սնանկացումը), դրա ընդհանուր բնութագիրը: Ձեռնարկության (կազմակերպության) սնանկության ընթացակարգն ու գործընթացը, սնանկացման ընթացակարգը: Դիտարկման բնութագիրը: Ֆինանսական աշխուժացումը: Պարտքատեր ձեռնարկությունների արտաքին կառավարումը: Վարկային պարտավորությունների ռեստրուկտրավորումը: Ֆիրմաների, համատեղ ձեռնարկությունների դերը, ձևերը, բովանդակությունը և օգտագործումը: Ձեռնարկության արտաքին տնտեսական գործունեության ոլորտի ընդլայնումը: Ուղղակի կապերի հաստատում և զարգացում արտասահմանյան գործընկերների հետ: Ձեռնարկության խնդիրները ներմուծման-արտահանման գործընթացների ընդլայնման գործում: Փոխարժեքային ֆոնդերը, դրանց ձևավորումը և օգտագործումը: Միջազգային բեռների փոխադրման մաքսային կանոնները: Ձեռնարկության արտաքին տնտեսական գործունեության պետական կարգավորումը: Գործարար շփումը ծայրահեղ իրավիճակներում: Ձեռնարկության ներդրումային և ֆինանսական գրավչության գնահատումը: «Վճարի շարք ապրանքային շուկաներում ձեռնարկությունների գործունեության գնահատումը:

Տնտեսական մրցակցության համակարգը. Տնտեսական մրցակցության էությունը և դրսևորման առանձնահատկությունները: Մրցակցության ձևերը և դրանց փոխադարձ կապը: Կատարյալ մրցակցության բնորոշ գծերը, առանձնահատկությունները, առավելությունները և թերությունները, դրանց փոխադարձ կապերի վերլուծությունը: Պարետոյի օպտիմումը: Ոչ կատարյալ մրցակցության բնորոշ գծերն ու դրսևորումները, դրանց փոխադարձ կապերի վերլուծությունը: Շուկայական տնտեսության հիմնական մոդելները: Շուկայական մոդելների (կառուցվածքի) դասակարգումը: Մենաշնորհները և դրանց հատկանիշները ժամանակակից պայմաններում: Ապամոնոպոլացումը որպես ազատ շուկայական մրցակցության ապահովման պայման: Շուկայի

անկատարությունը և տնտեսության մեջ պետական միջամտության անհրաժեշտությունը: Զուտ մոնոպոլիա: Թողարկման ծավալը և գինը: Անկատար մրցակցությունը և դրա դրսևորումները: Մենաշնորհային իշխանության ցուցանիշները: Հոմոգեն և հետերոգեն բարիքների օլիգոպոլ շուկաները: Կուրնոյի և դոտպոլիայի մոդելը: Արտադրանքի և ձեռնարկության մրցունակության ապահովումն ու պահպանումը: Արտադրանքի մրցունակության ապահովման, պահպանման ռազմավարությունը և գնահատումը: Ձեռնարկության մրցունակության ապահովման և պահպանման ռազմավարությունը և գնահատումը: Մենաշնորհ, դրա դրսևորումները ՀՀ-ում, մենաշնորհ իշխանություն, մենաշնորհի պատճառած վնասը և դրա գնահատումը: Բնական մենաշնորհները և դրանց կարգավորումը: Մենաշնորհային մրցակցության գնի և ծավալի որոշումը: Օլիգոպոլիա: Օլիգոպոլիստական գնային պատերազմները: Օլիգոպոլիայի մոդելը: Մրցակցային ռազմավարության ձևերը: Մրցակցային ուժերը և դրանց ռազմավարության մշակումը: ՀՀ օլիգոպոլական շուկաներում գների ճկունության գնահատումը: Օլիգոպոլիաների իրական կարգավորման անհրաժեշտությունը ՀՀ-ում: Օլիգոպոլական մի շարք ապրանքային շուկաների՝ ցեմենտի, էլեկտրաէներգիայի արտադրության, գարեջրի վերլուծությունը:

Պահանջարկը շուկայական հարաբերությունների համակարգում.

Պահանջարկը և դրա դրսևորման առանձնահատկությունները: Սպառողական պահանջարկը ձևավորող գործոնները և դրանց վարքագծի վերլուծությունն ու գնահատումը: Անհատական պահանջարկի ձևավորման գործընթացը և պահանջ- մունքների դերը այդ հարցում: Պահանջարկի գործընթացը ձեռնարկություններում: Շուկայական պահանջարկը ձևավորող գործոնները և պահանջարկի վրա դրանց ազդեցության վերլուծությունն ու գնահատումը: Պահանջարկի կորագծի կազմը, հատկությունները և դրա վարքագծի գործոնային վերլուծությունն ու գնահատումը: Պահանջարկի գործառույթը, հատկությունները, գնահատումն ու մոդելա-

վորումը: Սպառողի հավասարակշռության /օպտիմումի/ փոփոխությունը՝ կախված նրա եկամտի փոփոխությունից: Գնի փոփոխության ազդեցությունը սպառողի եկամտի և ապրանքների փոխարինիչների փոխարինելիության վրա: Եկամտի և փոխարինման էֆեկտները, դրանց փոխառնչության վերլուծությունն ու գնահատումը: Պահանջարկի կանխատեսումն ու պլանավորումը: Պահանջարկի ֆունկցիայի կառուցումը օգտակարության քանակական չափման (կարդինալիստական հիմնադրույթ) հիմնադրույթի հիման վրա: Պահանջարկի օգտակարության անուղղակի ֆունկցիայի և ծախսերի ֆունկցիայի փոխառնչությունը: Պահանջարկի ֆունկցիայի կառուցումը օգտակարության կարգային չափման հիմնադրույթի հիման վրա (օրդինալիստական հիմնադրույթ): Փոխարինման և եկամտի էֆեկտների վարքագծերի բնութագիրը: Դրանց փոխառնչության վերլուծությունն ու գնահատումը: Անհատական ընտրությունից դեպի անհատական պահանջարկը ագրեգավորող հիմնահարցը և դրա լուծման ուղիները:

Առաջարկը: Դրսևորման առանձնահատկություններն ու գնահատումը.

Արտադրողի վարքագիծը և դրա դրսևորման առանձնահատկությունները: Իզոքվանտները և դրանց դերը արտադրողի վարքագծի գնահատման գործընթացում: Իզոքվանտները և վարքագծի վերլուծությունը: Իզոքվանտները և դրանց դրսևորումները, կազմը, հատկությունները: Իզոքվանտների քարտեզը: Արտադրական ցանցը: ԱԳ տեխնիկական փոխարինման սահմանային նորմը: Տեխնոլոգիայի փոփոխության ազդեցությունը իզոքվանտի վարքագծի վրա: Արտադրողի բյուջեն և դրա վերլուծությունը: Առաջարկի դրսևորման առանձնահատկությունները: Առաջարկի գործոնային վերլուծությունն ու գնահատումը: Անհատական առաջարկի վերլուծությունն ու գնահատումը: Առաջարկի կորագիծը, կազմը, կառուցումը, հատկություններն ու վարքագծի գործոնային մոդելավորումը: Շուկայական (ճյուղային) առաջարկի վերլուծությունն ու գնահատումը: Հաստատուն ծախքերով ճյուղի առաջարկի կորագծի վերլուծությունը ըստ ժամանակի: Փոփոխական ծախքերով ճյուղի

առաջարկի կորագծի վարքագիծը ըստ ժամանակի: Արտադրողի հավասարակշռությունը 2 ապրանքների դեպքում: Կոնտարովիչի մոդելը: Արտադրական ֆունկցիան որպես առաջարկի դրսևորման գործիք: Արտադրական ֆունկցիան և արտադրության տեխնիկական արդյունքայնությունը: Կոբ-Դուգլասի ֆունկցիան, հատկությունները, վարքագծի վերլուծությունն ու մոդելավորումը: Ֆիրմայի վարքագծի դրսևորումները շուկայական տարբեր մոդելների պայմաններում: Սահմանային արդյունքների աճը և գոգավոր իզոքվանտները: Առաջարկի կանխատեսումը և պլանավորումը: Արտադրողի հավասարակշռությունը: Հավասարակշռությունը զուտ մրցակցային շուկայում: Արտադրողի հավասարակշռությունը շուկայական տարբեր մոդելների պայմաններում: Ձեռնարկության մենաշնորհ մրցակցային հավասարակշռությունը գնային հավասարակշռության դեպքում: Մենաշնորհ մրցակցությունը ձեռնարկության գնային և ոչ գնային մրցակցության դեպքում: Ճյուղի ռեսկցիան պահանջարկի փոփոխության (մեծացման, փոքրացման) պայմաններում: Ճյուղի առաջարկը կարճաժամկետ և երկարաժամկետ փուլում:

Ճկունության տեսությունը. Ճկունության հիմնախնդիրները և հիմնական հատկությունները: Ճտունության դրսևորումները: Պահանջարկի գնային ճկունության վերլուծությունն ու գնահատումը: Ըստ հասոյթի պահանջարկի գնային ճկունության վերլուծությունն ու գնահատումը, պահանջարկի հաստատուն կամ միավոր ճկունությունը, դրա վերլուծությունն ու գնահատումը: Պահանջարկի աղեղային և կետային ճկունությունը և դրա գնահատումը: Ըստ գնի պահանջարկի խաչաձև ճկունության վերլուծությունն ու գնահատումը: Պահանջարկի ոչ գնային ճկունության վերլուծությունն ու գնահատումը: Պահանջարկի ճկունությունն ըստ եկամտի, դրա վերլուծությունն ու գնահատումը: Շուկայական պահանջարկի ճկունության վերլուծությունն ու գնահատումը: Առաջարկի գնային կամ առաջարկի ուղղակի ճկունությունը և դրա վերլուծությունը: Առաջարկի կետային ճկունության վերլուծությունն ու գնահատումը: Առաջարկի ճկունության ոչ գնային գործոնները և դրանց ազդեցու-

Անկանխիկ դրամական շրջանառությունը և անկանխիկ հաշվարկների համակարգը: Անկանխիկ դրամական շրջանառությունը որպես դրամական շրջանառության կարևոր մաս: Անկանխիկ հաշվարկների կազմակերպման սկզբունքները, վճարման եղանակները, աղբյուրները, հերթականությունը և ձևերը: Կանխիկ դրամի շրջապտույտը և դրամաշրջանառությունը: Դրամաշրջանառության տնտեսական օրենքը: Դրամաշրջանառության բնութագրումը, նրա կառուցվածքը: Դրամաշրջանառության կազմակերպման առանձնահատկությունները շուկայական էկոնոմիկայի պայմաններում: Դրամաշրջանառության համար անհրաժեշտ դրամի քանակի որոշման խնդիրները:

Ինֆլյացիայի էությունը, նրա դրսևորման ձևերը, դրամաշրջանառության

կայունացման մեթոդները: Ինֆլյացիայի պատճառները: Ինֆլյացիան որպես հետևանք դրամաշրջանառության տնտեսական օրենքի խախտման, արտադրության անհամամասնական զարգացման, տնտեսության ռազմականացման: Ինֆլյացիայի արտաքին գործոնները: Ինֆլացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները: Ինֆլյացիայի կարգավորումը, մեթոդները, սահմանները և հակացույցությունները:

Դրամական համակարգերը, դրանց էությունը, տարրերը, տեսակները և դասակարգումը: Հայաստանի հանրապետության դրամական համակարգը, նրա առանձնահատկությունները: Զարգացած երկրների /ՌԴ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանցիա, Գերմանիա/ դրամական համակարգերի առանձնահատկությունները:

Թղթադրամը և վարկադրամը, դրանց շրջանառության օրինաչափությունները: Թղթադրամի ծագման անհրաժեշտությունը և հնարավորությունը: Թղթադրամի արժեզրկման պատճառները: Վարկադրամի տեսակները և էությունը: Վարկադրամի երկակի բնույթը ժամանակակից զարգացած երկրներում:

Միջազգային արժույթային հարաբերությունները և արժույթային համակարգը: Արժույթային հարաբերությունների բնութագրումը, դրանց կապը ապրանքային արտադրության, միջազգային առևտրի զարգացման, կապիտալի ծառայությունների շարժի հետ: Արժույթային փոխարժեքը և դրա որոշման եղանակները, արժույթային փոխարժեքի տատանումների վրա ազդող գործոնները: Արժույթային փոխարժեքի ռեժիմը, հաստատագրված (ֆիքսված) և ազատ տատանվող փոխարժեքները:

Վարկի անհրաժեշտությունը, էությունը, ֆունկցիաները, ձևերը և տեսակները շուկայական էկոնոմիկայի պայմաններում:

Ապրանքային արտադրությունը և փողի առկայությունը որպես հիմք վարկային հարաբերությունների ծագման համար: Վարկի կառուցվածքը, վարկային հարաբերությունների սուբյեկտները: Վարկավորողի (վարկատուի) և

փոխառուի (վարկառուի) բնութագրումը: Վարկային հարաբերությունների տեսակները: Վարկի փոխադարձ կապը այլ տնտեսական հասկացողությունների հետ: Վարկի ֆունկցիաները: Վարկի կապը այլ տնտեսական հասկացողությունների հետ (վարկը և փողը, վարկը և գինը, վարկը և ֆինանսները, վարկը և ինքնաֆինանսավորումը, վարկը և շրջանառու միջոցները): Վարկի ձևերն ու տեսակները (առևտրային և լիզինգային վարկ, բանկային վարկ, միջտնտեսական վարկ, սպառողական վարկ, պետական վարկ, միջազգային վարկ): Վարկի ձևերի դասակարգումը, վարկի ապրանքային և դրամական ձևը:

Փոխատվական կապիտալը և վարկը, փոխատվական կապիտալի աղբյուրները և առանձնահատկությունները: Փոխատվական կապիտալի շուկան, նրա կառուցվածքը և առանձնահատկությունները: Պետության դերը տնտեսության վարկային կարգավորման գործում: Դրամավարկային ճգնաժամերի էությունը, ձևերը և դրանց սոցիալ-տնտեսական հետևանքները:

Վարկի դերը և սահմանները շուկայական էկոնոմիկայի պայմաններում: Վարկի դերը ընդլայնված վերարտադրության պրոցեսում: Վարկի սահմանների որոշման կարգը: Վարկի սահմանների խախտումներ առաջացնող գործոնները:

Փոխատվական տոկոսը և դրա տնտեսական դերը շուկայական էկոնոմիկայի պայմաններում: Փոխատվական տոկոսի էությունը և ֆունկցիաները: Փոխատվական տոկոսի կապը շահույթի և գնի հետ:

Միջազգային վարկային հարաբերությունները, փոխատվական կապիտալի միջազգային շուկան: Միջազգային վարկի էությունը և ձևերի դասակարգումը: Լիզինգ, ֆակտորինգ: Միջպետական և խառը վարկեր: Հաստատագրված և լողացող տոկոսադրույքներ: Փոխատվական կապիտալի միջազգային շուկան, դրա կառուցվածքը: Միջազգային վարկի ֆունկցիաները և դերը շուկայական էկոնոմիկայի պայմաններում:

Պետության դերի մեծացումը միջազգային հարաբերությունների ոլորտում:

Միջազգային և ռեգիոնալ վարկային կազմակերպությունները: Ձեռնարկությունների, կազմակերպությունների արտասահման-ներմուծման գործարքների վարկավորումը:

Բանկային և վարկային համակարգը: Բանկերի ծագումը, էությունը և ֆունկցիաները: Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը և նրա արմատական վերակառուցումն ու զարգացումը: Բանկային համակարգը որպես շուկայական էկոնոմիկայի ձևավորման անհրաժեշտ պայման: Ըստ սեփականության ձևերի բանկերի տեսակները: Հայաստանի Հանրապետության բանկային համակարգ կառուցվածքը: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, նրա ֆունկցիաները, դրանց առանձնահատկությունները, դրամա-վարկային քաղաքականությունը, նպատակները և դերը տնտեսության կարգավորման գործում: Առևտրային բանկերը, դրանց կազմակերպման կառուցվածքը և գործառնությունները: Ակտիվային և պասիվային գործառնությունները, դրանց դասակարգումը: Վարկային գործառնությունների հիմնական տեսակները, դրանց առանձնահատկությունները: Բանկային գործունեության եկամուտները և ծախսերը, բանկային շահույթը, ստացման աղբյուրները, շահույթի նորման, բանկային իրացվելիությունը դրա ցուցանիշները և որոշման կարգը: Բանկային ռիսկը և սնանկացումը: Վարկային համակարգը որպես վարկային հարաբերությունների և վարկային հիմնարկությունների ամբողջություն: Բանկերը և ոչ բանկային ֆինանսական ինստիտուտները (գրավատները, փոխօգնության դրամարկղները, տարբեր ֆինանսական ֆոնդերը, վարկային կոոպերատիվները, լիզինգային ընկերությունները: Բանկերը որպես վարկային համակարգի գլխավոր օղակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին
2. ՀՀ օրենքը Բանկերի և բանկային գործունեության մասին

3. Բաղանյան ԼՀ., Բանկային գործի հիմունքներ. ուս. ձեռնարկ, Ե., «Տնտեսագետ», 2003թ.
4. Սուքիասյան Ս.Ս., Առևտրային բանկերի գործունեության տնտեսական կարգավորման արդի հիմնախնդիրները, Մենագր., Ե., Տնտեսագետ, 2005
5. Ասատրյան Բ., Բանկային գործ: Ուս. ձեռնարկ /Երևան: Սարվարդ Հրատ., 2004. - 718 էջ:
6. Ավետիսյան Ռ.Ա., Խաչատրյան Ա. Ս., Բանկային գործ և դրամաշրջանառության հիմունքներ: Ուս. ձեռնարկ: Մաս 1 /Եր.: ՀՊՃՀ, 2005. - 104 էջ
7. Ավետիսյան Ռ.Ա., Խաչատրյան Ա. Ս., Բանկային գործ և դրամաշրջանառության հիմունքներ: Ուս. ձեռնարկ: Մաս 2 /Ե.: ՀՊՃՀ հրատ., 2007. 104 էջ
8. Եզեկյան Ա.Ռ., Գրավը որպես վարկային պարտավորությունների ապահովման միջոց /Երևան: 2004. - 181 էջ
9. Հակոբյան Ա.Ա., Սարգսյան Ա.Զ., Ֆինանսական վարձակալություն / Երևան: Ա. հ., 2011. - 256 էջ
10. ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկ / ՀՀ Կենտրոնական բանկ, Երևան: Ա. հ., 2004. - 198 էջ
11. Շարխատունյան Հ.Հ., Բանկային գործառնություններ & Excel: Ուսումնական ձեռնարկ / Երևան: Ասողիկ, 2005. - 336 էջ
12. Շարխատունյան Հ.Հ., Բանկային գործառնություններ: Ուսումնական ձեռնարկ / Երևան: Ասողիկ, 2002. - 281 էջ
13. Պիվազյան Հ.Վ., Դրամաշրջանառության կայունացման մեթոդները, Դասախոսության տեքստեր. Եր., ՀՊԱՀ, 2010. - 56 էջ
14. Ռաֆայելով Զ.Ս., Առևտրային բանկերի պորտֆելների գնահատումը և կառավարումը: (Տեսական և գործնական հարցեր) /Ե.: Ա. հ., 2007. - 158 էջ
15. Սարգսյան Տ.Ս. Փոխարժեքի դերը դրամավարկային քաղաքականության մեջ. - Եր.: ՖԵՆՈՄԵՆ հրատ., 2008.- 128 էջ:
16. Սովարյան Ա.Բ., Առևտրային բանկերի կորպորատիվ ռազմավարությունը և դրա արդյունավետությունը /Եր.: ՀՌՀ հրատ., 2008.-233 էջ
17. Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /Դասագիրք/ Լ. Բաղանյան, Կ. Աբգարյան, Գ. Չատինյան, Ա. Մաթևոսյան և ուրիշներ, Ե., 2010, 588 էջ
18. Анализ кредитоспособности организации и группы компаний: учебное пособие /Д.А. Ендовицкий под ред., К.В. Бахтин, Д.В. Ковтун.М.:2016. 375 с.
19. Банк и банковские операции: учебник / О.И. Лаврушин под ред. и др. — Москва: 2016. — 268 с.
20. Деньги, кредит, банки: учебник / коллектив авторов. под ред. О.И. Лаврушина. — 15-е изд., стер. — М.: КНОРУС, 2016. — 448 с.

21. Деньги, кредит, банки: учебное пособие / А.П. Бондарь, В.Н. Боровский, Л.В. Боровская. – Симферополь, 2016. – 306 с.
22. Деньги, кредит, банки: учебное пособие /В.В. Янов, И.Ю. Бубнова. Москва: 2017. 419 с.
23. Деньги, кредит, банки: учебное пособие / И.В. Меркулова, А.Ю. Лукьянова. — Москва: 2016. — 347 с.
24. Деньги. Кредит. Банки: учебник / А.С. Селищев. — 2-е издание. — Москва: Проспект, 2016. — 303 с.
25. Деньги. Кредит. Банки: Учебник для бакалавров в вопросах и ответах / Б.И. Соколов, В.В. Иванов. - М.: НИЦ ИНФРА-М, 2016. - 288 с.
26. Интернет-технологии в банковском бизнесе: перспективы и риски: учебно-методическое пособие/ Ю.Н. Юденков, Н.А. Тысячникова, И.В. Сандалов, С.Л. Ермаков. — Москва. 2015. — 320 с.
27. Новое прочтение теории кредита и банков: монография / И.В. Ларионова, под ред. — Москва: 2017. — 229 с.
28. Организация деятельности центрального банка: учебник / О.И. Лаврушин, И.Д. Мамонова, Г.Г. Фетисов. — Москва: 2016. — 440 с.
29. Осуществление кредитных операций: учебник / О.И. Лаврушин. — Москва: КноРус, 2017. — 241 с.
30. Розанова Н.М., Монетарная экономика. Теория денег и кредита: Учебник. В 2 томах. Москва, Юрайт. – 2016. Том 1 – 270 с., Том 2 – 310 с.
31. Рынок банковского обслуживания физических лиц: тенденции и перспективы развития: монография / Н.Е. Бровкина. М.: КноРус, 2017. 263 с.
32. Финансы, деньги, кредит, банки: учебник / Т.М. Ковалева под ред. и др. — Москва: 2017. — 250 с.
33. Экономическая теория денег, банковского дела и финансовых рынков: Учеб. пособие для студентов вузов /Фредерик Мишкин; Пер. с англ. Д. В. Виноградова; Науч. ред. пер. М. Е. Дорошенко. М.:Аспект Пресс, 1999.819 с
34. Эффективность системы регулирования банковского сектора и потребности национальной экономики: монография / И.В. Ларионова под ред. и др. — Москва: 2016. — 172 с.

3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ ԵՎ ԲՈՐՍԱՅԻՆ ԳՈՐԾ

Արժեթղթերի շուկան, էությունը և դերը ֆինանսական շուկայի ձևավորման և զարգացման գործում: Արժեթղթերի շուկայի հիմնական գծերը, գործառույթները, ենթակառուցյունները և շաղկապվածությունը տնտեսության ֆինանսավորման և կառավարման մյուս հիմնահարցերի հետ: ՀՀ արժեթղթերի շուկայի բնութագիրը և գնահատումը, այդպիսի շուկայի ձևավորման և հետագա զարգացման հիմնահարցերը: Արժեթղթերի շուկայի տնտեսական կարգավորման անհրաժեշտությունը, կարգավորման մարմինները և օրենսդրական ու նորմատիվային ակտերը:

Արժեթղթերը որպես ֆինանսական գործիքներ, արժեթղթերի տեսակները (բաժնետոմսեր, պարտատոմսեր, սեփականաշնորհման պետական արժեթղթեր, ավանդային սերտիֆիկատներ, մուրհակներ, այլ արժեթղթեր): Արժեթղթերի դասակարգումը՝ ներդրումային, վճարային, տիտղոսային և ածանցյալ արժեթղթերը, դրանց հիմնական առանձնահատկությունները:

Ներդրումային արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման կարգը և գործընթացները: Արժեթղթերի թողարկման թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերը, դրանց քննարկման և գրանցման կարգն ու պայմանները: Արժեթղթերի անվանական արժեքի սահմանման սկզբունքները, դրա համար անհրաժեշտ ցուցանիշներն ու հաշվարկները: Արժեթղթերի տեղաբաշխման գնի (կուրսի) որոշման սկզբունքներն ու պայմանները: Արժեթղթերի իրացվելիության աստիճանի, փողի արժեզրկման և այլ գործոնների ազդեցությունը արժեթղթերի փոխարժեքի վրա:

Արժեթղթերի շուկայի վերլուծության կազմակերպումը: Ֆունդամենտալ և տեխնիկական վերլուծությունը արժեթղթերի շուկայում:

Գնագոյացումը արժեթղթերի երկրորդային շուկայում: Վարկային շուկայի և այլ գործոնների ազդեցությունը արժեթղթերի գնագոյացման վրա:

Ֆինանսական շուկաների նշանակությունը, գործառույթները, կառուցված-

քը և դասակարգումը: Ֆոնդային բորսան, դրա գործառույթները և դերը, դրանց կազմակերպման և կարգավորման առանձնահատկությունները: Բորսայական գործառնությունները, տեսակները, բովանդակությունը և կատարման կարգը: Բորսային գործարքի մասնակից կողմերը՝ բրոքերներ, մասնագետներ, դիլերներ, դրանց գործունեության կազմակերպման կարգը, փոխհարաբերությունները: Ապրանքային և ֆոնդային բորսաների տարբերությունը: Ապրանքային բորսաներում կատարվող գործարքները:

Արժեթղթերի պորտֆելի էությունը, բնորոշ գծերը, տեսակները և դրանց ձևավորման և կառավարման նպատակները: Պորտֆելային տեսության հիմնական հասկացությունները՝ ռիսկ և եկամտաբերություն, անտարբերության կորեր, դիվերսիֆիկացիա, կովարիացիա և կոռելյացիա: Արժեթղթերի արդյունավետ և օպտիմալ պորտֆելներ: Պորտֆելների օպտիմալացման հիմնական մեթոդները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքը
2. Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքը
3. Սալնազարյան Ա.Բ., Արժեթղթերի շուկա: /Եր.: Զանգակ-97, 2009.- 336 էջ
4. Բաղդասարյան Ա.Մ., Արժեթղթերի շուկայի զարգացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում / Եր.: Նահիրի, 2013. - 332 էջ
5. Սուքիասյան Ֆ.Պ., Մխոյան Լ.Ս., Մանվելյան Ա.Ռ., Արժեթղթերի շուկա: (Դասախոսություններ) /Գյումրի: «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալս. հրատ., 2008. - 132 էջ
6. Ալլախյան Ս.Վ., Ֆինանսական ներդրումներ: Ու. Ձեռնարկ, Եր.: Ճարտարագետ, 2005. - 200 էջ
7. Շաթիրյան Է.Է., Մուրադյան Ս.Վ., Ֆինանսական իրավունք: Ու. ձեռնարկ /Երևան: ԵՊՀ հրատ., 2009. - 352 էջ
8. Սահակյան Ռ.Ա. Ֆինանսական գործիքներ և մեխանիզմներ: Ու. ձեռնարկ - Եր.: Տնտեսագետ, 2006. - 138 էջ:
9. Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /Դասագիրք/ Լ. Բաղանյան, Կ. Աբգարյան, Գ. Չատինյան, Ա. Մաթևոսյան և ուրիշներ, Ե., 2010, 588 էջ:

10. Галанов В.А., Рынок ценных бумаг. Учебник, М., Инфра-М., 2017.–416с.
11. Грэхем Б., Додд Д., Анализ ценных бумаг, Москва. Вильямс, 2016.–880с.
12. Инвестиции У. Шарп, Г. Александер, Д. Бэйли М., ИНФРА-М, 1997, 1024 с.
13. Кирьянов И.В., Рынок ценных бумаг и биржевое дело. Учебник, М., Инфра-М., 2017.–264с.
14. Михайленко М.Н., Рынок ценных бумаг: учебник и практикум. – М.: Юрайт, 2016. – 324с.
15. Миркин Я.М., Ценные бумаги и фондовый рынок. – М., 1995.488с.
16. Рид С.Ф., Лажу А.Р., Искусство слияний и поглощений, М., Альпина паблишер, 2011. – 960 с.
17. Лайди А., Валютный трейдинг и межрыночный анализ: Как зарабатывать на изменениях глобальных рынков. – М.: Альпина Паблишер, 2013. – 410 с.
18. Рынок ценных бумаг. Учебник (Под.ред.В.А.Галанова и А.И. Басова) – 2-ое изд. – М.: Финансы и статистика, 2006. -448 е.
19. Рынок ценных бумаг. Учебник Под. общ. ред. Н.И. Берзова – М.: Юрайт, 2016. -444 с.
20. Рынок ценных бумаг: учебное пособие / Б.В. Сребник. — Москва: КноРус, 2016. — 288 с.
21. Рынок ценных бумаг. Учебник . ред. Ю.А.Соколова М.: Юрайт, 2016. 383 с.
22. Селищев А.С., Маховикова Г.А., Рынок ценных бумаг. Учебник и практикум – М.: Юрайт, 2016. -484 с.
23. Халл Джон К., Опционы, фьючерсы и другие производные финансовые инструменты. Москва. Вильямс, 2013. – 1072с.
24. Чалдаева Л.А., Килячков А.А., Рынок ценных бумаг. Учебник– М.: Юрайт, 2017. -342 с.
25. Ческидов Б.М., Рынок ценных бумаг. Учебник, Москва. , 2001.–384с.
26. Школик О. А., Финансовые рынки и финансово-кредитные институты. Уч. пособие. М., - Юрайт. 2016. – 288 с.

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ

Ապահովագրության տեղն ու դերը շուկայական տնտեսության պայմաններում: Ապահովագրական համակարգի զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում: ՀՀ ապահովագրական շուկան և նրա հիմնական մասնակիցները: Ապահովագրական գործի պետական կարգավորումը և ինքնակար-

գավորումը: Ապահովագրական շուկան բնութագրող հիմնական ցուցանիշները: Ապահովագրության գործառույթները տնտեսական զարգացման արդի փուլում: Ապահովագրական գործունեության կազմակերպման հիմնախնդիրները: Ապահովագրական պայմանագիր, նրա մասնակիցների իրավունքները և պարտականությունները: Ապահովագրությունը միջազգային տնտեսական հարաբերություններում: Ապահովագրական ընկերության ֆինանսական կայունությունը և վճարունակությունը: Կամավոր և պարտադիր ապահովագրություն, նրանց տարբերիչ առաննահատկությունները: Պատասխանատվության ապահովագրություն, նրա տեսակները և հիմնական պայմանները: Ավտոտրանսպորտաին միջոցների ապահովագրությունը և զարգացման հեռանկարները: Բժշկական ապահովագրությունը և զարգացման միտումները ՀՀ-ում: Վերապահովագրությունը, նրա մեթոդները և կողմերի փոխհարաբերությունները: Ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /Դասագիրք/ Լ. Բադանյան, Կ. Աբգարյան, Գ. Չատինյան, Ա. Մաթևոսյան և ուրիշներ, Ե., 2010, 588 էջ:
2. Աբգարյան Կ.Հ., Ապահովագրությունը շուկայական տնտեսությունում: Դասախոսություն: Երևան: Տնտեսագետ, 2004. - 25 էջ
3. Ավետիսյան Վ., Դադունց Ա., Հակոբյան Մ., Հարությունյան Վ., Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում. Երևան: Գիտություն, 2010.- 126 էջ
4. Կիրակոսյան Կ. Խ., Ապահովագրական գործ: Ուս. ձեռնարկ. Երևան: Կռունկ, 2011. - 352 էջ
5. Կիրակոսյան Կ., Ավետիսյան Ս., Գյուղատնտեսական կենդանիների փոխադարձ ապահովագրության կազմակերպումը: Խորհրդատվություն ֆերմերներին/ Երևան, 2007. - 44 էջ
6. Մարկոսյան Ա.Ա., Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության միջազգային փորձի կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում/ Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2014. - 208 էջ

7. Галаганов В.П., Основы страхования и страхового дела. Учебное пособие. — Москва : КноРус, 2016. — 216 с.
8. Гантенбайн М., Мата М., Защита активов и страхование. Что предлагает Швейцария. М., Альпина Паблишер. 2015. – 376 с.
9. Страхование и управление рисками. Учебник. Под ред. Черновой Г.В., — Москва. Юрайт. 2017. — 768 с.
10. Ермасов С.В., Ермасова Н.Б., Страхование: учебник. — Москва : Образование, 2008. — 624 с.
11. Роик В., Экономика, финансы и право социального страхования. Институты и страховые механизмы. Москва: Альпина Паблишер. – 2013. – 258 с.
12. Организация страхового дела. Учебник и практикум. Под ред. И.П.Хоминич, Е.В.Дик, — Москва. Юрайт. 2016. — 232 с.
13. Страхование: учебник / А.П. Архипов. — Москва: КноРус, 2016. — 336 с.
14. Страхование Учебник и практикум. Под ред. И.П.Хоминич, Е.В.Дик, — Москва. Юрайт. 2016. — 232 с.
15. Никулина Н. Н., Страхование. Теория и практика: уч. пособие. - М.: ЮНИТИ-[ДАНА], 2008. - 511 с
16. Гвозденко А.А., Страхование : учебник. Москва: Проспект, 2006. 464 с.
17. Тарасова Ю.А., Страхование Учебник и практикум. М.: Юрайт. 2017. 236с.
18. Сплетухов Ю.А., Дюжиков Е.Ф., Страхование. Учебник, М.: 2012. - 348 с.
19. Черных М.Н.Каячев Г.Ф., Каячева Л.В., Страхование: Финансовые аспекты. Уч. пособие. — Москва : КноРус, 2015. — 284 с
20. Балабанов И.Т., Балабанов А.И., Страхование Организация. Структура. Практика.,— СПб.. Питер. 2003. — 256 с.
21. Страхование: учеб для вузов / под ред. В. В. Шахова, Ю. Т. Ахвледиани. - М.: ЮНИТИ-[ДАНА], 2009. - 511 с.
22. Анисимов А.Ю., Костюхин Ю., Обухова А., Скрябин О., Страхование. Учебник и практикум. — Москва. Юрайт. 2016. — 186 с.

5. ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾ

«Վ մաքսային համակարգի ընդհանուր բնութագիրը: Մաքսային արժեքի որոշման մեթոդները: Մաքսային հսկողության իրականացման ձևերը: Մաքսային քաղաքականությունը և «Վ ինտեգրումը համաշխարհային տնտեսական գործընթացներին: Արտաքին տնտեսական գործունեություն սակագնա-

յին կարգավորման միջոցները: Ոչ սակագնային սահմանափակումների էությունը և ազդեցությունը տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության վրա: Արտաքին տնտեսական գործունեության սակագնային կարգավորման միջոցները: Մաքսային ռեժիմների տեսակները և կառուցվածքը: Մաքսահրավական կարգավորման մեթոդները: Մաքսային մարմինների կողմից իրականացվող օպերատիվ հետախուզական գործունեության իրականացումը: Մաքսային մարմինների կողմից ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրման մեխանիզմը: Ապրանքների ծագման երկրի որոշման կանոնները: Մաքսանենգությունը և նրա դեմ պայքարի իրականացումը մաքսային մարմինների կողմից: Ավելացված արժեքի գանձման կարգը մաքսային մարմինների կողմից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /Դասագիրք/ Լ. Բադանյան, Կ. Աբգարյան, Գ. Չատինյան, Ա. Մաթևոսյան և ուրիշներ, Ե., 2010, 588 էջ:
2. Ճուղություն Ա.Գ., Աբգարյան Կ.Հ., Մաքսային գործի հիմունքներ: Ուս. ձեռնարկ. Եր.: Ա. հ., 2007. -488 էջ
3. Նազարյան, Լ.Ս., Մաքսային գործ: (Տեսություն և պրակտիկա): Համառոտ դասընթաց. Երևան: Ա. հ., 2008. - 218 էջ
4. Դանիելյան Ա.Ս., Մաքսային գործի իրավական հիմունքները: Ուսումնական ձեռնարկ. Երևան: ԵՊՀ հրատ., 2011. -318 էջ
5. Միքայելյան Կ.Ա., Մաքսային գործի կազմակերպումը Հայաստանի Հանրապետությունում. Երևան: Տնտեսագետ, 2004. - 128 էջ
6. Բայբուրջյան Վ.Ա., Մաքսասակագնային կարգավորումը և մաքսային քաղաքականությունը ՀՀ-ում. Երևան: Հայաստան, 2008.- 40 էջ
7. Գրիգորյան Ռ. Լ., Ստեփանյան Ա.Շ, Մաքսային գործ: Ուս. ձեռնարկ. Երևան: ԵրՃՇՊՀ հրատ., 2012.-107 էջ.
8. Հարությունյան Ա.Ս., Մաքսային գործի կազմակերպման հիմնահարցեր: Ուսումնասմեթոդական ձեռնարկ. Եր.: Տիգրան Մեծ, 2002
9. Սուքիասյան Գ.Ա., Սուքիասյան Ն.Գ., Մաքսային իրավունք: Ուս. ձեռնարկ. Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016.-470 էջ

10. Герашенко Г.П., Дианова В.Ю., Андрейчук Е.Л., Экономика таможенного дела. Учебник и практикум. Москва. Юрайт. – 2016. – 236 с.
11. Основы таможенного дела. Учебник. ред. Джабиева А.П., М.: 2017,394 .
12. Попова Л.И., Товароведение и экспертиза в таможенном деле. Уч. пособие. М.- Юрайт. – 2017. – 227с.
13. Ершов А.Д., Завялова О.В., Система управления рисками в таможенном деле. М.: Гиорд. 2014. – 320 с.
14. Макрусев В. В. Основы системного анализа: учебник для студентов вузов/ В. В. Макрусев; Российская таможенная академия. -3-е изд.. - М.: Изд-во Российской таможенной академии, 2009. -573 с
15. Покровская В.В., Таможенное дело: учебник. – М.: Юрайт. – 2015. – 736с.
16. Основные аспекты совершенствования таможенного дела. Насретдинова И.Т., М.: Русайнс, 2017. – 108 с.
17. Таможенное дело: учебник, Г.А.Маховикова, Е.Е. Павлова. – М.: Юрайт, 2016. – 408 с.
18. Киладзе А.Б., Логистика в таможенном деле. Уч. пособие. М.: 2016. 144с.
19. Терешенкова А.Ю., Таможенные услуги: вопросы теории и практики. Монография. LAP Lambert Academic Publishing. 2011. – 260 с.
20. Мацкевич В., Цыкунов И., Грузицкий Ю., Тарарышкина Л., Таможенное дело. М.: Бысшая школа. – 2015. -360с.
21. Толкушкин А. В. Таможенное дело: учебник. -М.: Юрайт; М.: Высшее образование, 2009. -505 с.
22. Вологдин А. А. Правовое регулирование внешнеэкономической деятельности: учебное пособие для вузов: допущено УМО/ А. А. Вологдин. -2-е изд. -М.: Юрайт, 2011. -425 с.
23. Свинухов В. Г. Таможенно-тарифное регулирование внешнеэкономической деятельности и таможенная стоимость: учебник/ В. Г. Свинухов. -М.: Экономистъ, 2005. -271 с.
24. Афонин П. Н. Информационные таможенные технологии: учебник. - СПб.: Троицкий мост, 2012. -352 с.

6. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ԱՌԻԴԻՏ

Տնտեսական հաշվառման բնութագիր. Տնտեսական հաշվառումը, ծագումն ու զարգացումը: Տնտեսական հաշվառումը որպես կառավարման ֆունկցիա: Տնտեսական հաշվառման հաշվային չափիչները: Տնտեսական

հաշվառման տեսակները: Վիճակագրական, հաշվապահական և օպերատիվ հաշվառման համեմատական բնութագիրը:

Հաշվապահական հաշվառման առարկան. Հաշվապահական հաշվառման առարկան, նրա կարևորագույն օբյեկտները: Տնտեսական պրոցեսները: Տնտեսական պրոցեսները որպես հաշվային օբյեկտներ: Դրանց դասակարգումը ըստ շրջապտույտի փուլերի: կազմակերպության ակտիվների, կապիտալի և պարտավորությունների սահմանումը:

Հաշվապահական հաշվեկշիռ և հաշիվներ: Կրկնակի գրանցում. Տեղեկատվության ամփոփման և երկակի արտացոլման հաշվեկշռային մեթոդը, նրա դերն ու նշանակությունը: Հաշվեկշռի ակտիվային ու պասիվային համարժեքությունը: Հաշվեկշիռը որպես կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների մնացորդային ամփոփման եղանակ: Հաշվեկշռի կառուցվածքն ու բովանդակությունը: Սկզբնական, փորձնական ու ամփոփիչ հաշվեկշիռներ: Հաշվեկշռի հոդվածների խմբավորումը ըստ արտադրության գործընթացին մասնակցության դերի: Հաշվեկշռի անալիտիկ հատկանիշները: Հաշվապահական հաշիվներ, դրանց կառուցվածքը և տեսակները: Հաշիվներում գրանցումներ կատարելու կարգը: Կրկնակի գրանցման էությունը: Կրկնակի գրանցման ֆունկցիաները: Գործառնությունների հետևանքով հաշվեկշռում տեղի ունեցող փոփոխությունները: Հաշվային թղթակցություններ: հաշվապահական գրանցումներ, դրանց տեսակները: Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները: Հաշվառման վարումը հայրենական արժույթով, անընդհատության սկզբունքով, կրկնակի գրանցման եղանակով: Սինթետիկ և անալիտիկ հաշվառման փոխկապվածությունը: Տնտեսական գորշառնությունների գրանցամատյանները: հաշվապահական հաշիվների համակարգը: Հաշիվների ու հաշվեկշռի փոխադարձ կապը: Ընթացիկ հաշվառման տվյալների ամփոփումն ու ստուգումը: Շրջանառության տեղեկագրի: Հաշվապահական հաշվառման հաշիվների դասակարգման նշանակությունը: Հաշիվների դասա-

կարգումն ըստ տնտեսական բովանդակության, նշանակման ու կառուցվածքի, հաշվառման տեսակների ու հաշվային համակարգի հետ ունեցած կապի: Հաշվապահական հաշիվների պլանը, անհրաժեշտությունը, բնութագրումը և կառուցվածքը:

Կազմակերպության հաշվառման կազմակերպումը. Կազմակերպության ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները հաշվապահական հաշվառման կազմակերպման գործում: Կազմակերպության գլխավոր հաշվապահի իրավունքներն ու պարտականությունները: Հաշվառման գրանցամատյանները, դրանց դերը հաշվային համակարգում: Հաշվապահական հաշվառման ձևերը և դրանց զարգացման հեռանկարները: Հաշվապահական հաշվառման մեթոդոլոգիական ղեկավարումը Հայաստանի Հանրապետությունում:

Հաշվապահական հաշվառման օրենսդրական դաշտը. Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքի մեկնաբանումը: Հաշվապահական ստանդարտների անհրաժեշտությունը, խնդիրները և անվանացանկը: Շահութահարկի, եկամտահարկի և ավելացրած արժեքի հարկի մասին ՀՀ օրենքների կարգավորիչ դերը հաշվապահական հաշվառման ոլորտում: Հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի էությունը, կառուցվածքն ու դերը հաշվային աշխատանքների կազմակերպման գործընթացում: Հաշվային պլանի և ստանդարտների ինտեգրացումը:

Ֆինանսական հաշվառում. Ֆինանսական հաշվառումը և նրա տեղեկատվական նշանակությունը. Ֆինանսական հաշվառման առարկան և նրա ուսումնասիրման օբյեկտները: Ֆինանսական տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը և նպատակը: Ֆինանսական տեղեկատվության օգտագործողները: Ֆինանսական կառավարման և հարկային հաշվապայայան համեմատական բնութագիրը: Ֆինանսական հաշվառման սկզբունքները:

Ֆինանսական հաշվառումը որպես ֆինանսական կառավարման կարևոր

րագույն տեղեկատվական աղբյուրը. Ֆինանսական հաշվառման կապը տնտեսական գործունեության ռազմավարության հետ: Ֆինանսական և վիճակագրական հաշվառման փոխկապակցվածությունը: Ֆինանսական հաշվառման դերը տնտեսական գործունեության վերլուծությունը տեղեկատվական աղբյուրների ապահովման գործընթացում:

Հիմնական միջոցների հաշվառումը. Հիմնական միջոցների սահմանումը, դասակարգումը, գնահատումը և ճանաչումը: Հիմնական միջոցների ձեռք բերման սկզբնական հաշվառումը, չափումը և մուտքի հաշվառումը: Հիմնական միջոցների մաշվածությունը, հաշվարկման մեթոդները և սինթետիկ հաշվառումը: Հիմնական միջոցների շահագործման ընթացքում կատարվող հետագա ծախսումների հաշվառումը: Հիմնական միջոցների վերագնահատումը և վերագնահատված միջոցների մաշվածության հաշվառումը: Հիմնական միջոցների գույքագրումը: Հիմնական միջոցների վերագնահատման և արդյունքների հաշվառումը: Հիմնական միջոցների օտարման հաշվառումը: Հիմնական միջոցների վարձակալության հաշվառումը: Հիմնական միջոցների արժեզրկման հաշվառումը:

Ներդրումային գույքի հաշվառումը. սահմանումը, ճանաչումը և սկզբնական չափումը: Ներդրումային գույքի հաշվապահական հաշվառման իրական արժեքի մոդելի և սկզբնական մոդելի էությունը: Վերադասակարգումների հաշվառումը: Ներդրումային գույքի օտարման հաշվառումը:

Ոչ նյութական ակտիվների հաշվառումը. սահմանումը, դասակարգումը, գնահատումը և ճանաչումը: Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվների հաշվառումը: Ձեռնարկատիրական գործունեության միավորումների արդյունքում ձևավորվող դրական գուդվիլի հաշվառումը: Պետական շնորհի միջոցով և փոխանակումների կարգով ձեռք բերված ոչ նյութական ակտիվների հաշվառումը: Ներստեղծված ոչ նյութական ակտիվների հաշվառումը: Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվառումը: Ոչ նյութական ակտիվների շրջանառությունից հանելու և օտարման հաշվառումը:

Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների հաշվառումը. Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների հաշվառումը: Կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում կատարված սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների հաշվառումը: Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների հաշվառումը: Մինչև մարման ժամկետը պահվող երկարաժամկետ ներդրումների հաշվառումը: Որպես հեշավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների հաշվառումը: Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների արժեզրկման (անհավաքագրելիության) հաշվառումը:

Պաշարների հաշվառումը. Պաշարների սահմանումը, դասակարգումը և գնահատումը: Պաշարների ձեռք բերման փաստաթղթային ձևակերպումը, ձեռք բերման ծախսումների հաշվարկումը և մուտքի հաշվառումը: Պաշարների պահեստային և հաշվապահական հաշվառման տարբերակները: Նյութերի ծախսի փաստաթղթային ձևակերպումը և ծախսված նյութերի արժեքի գնահատման մեթոդները: Աճեցվող և բուլվող անասունների հաշվառման առանձնահատկությունները: Արագամաշ առարկաների շարժի հաշվառումը: Պատրաստի արտադրանքի և անավարտ արտադրության գնահատումը և հաշվառումը: Ապրանքային շարժի հաշվառման առանձնահատկությունները առևտրային կազմակերպություններում: Պաշարների գույքագրումը և հաշվեկշռային արժեքի չափումը ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Գործառնական և այլ ընթացիկ դեբիտորական պարտքերի հաշվառումը. սահմանումը և ճանաչումը: Վաճառքի գծով դեբիտորական պարտքերի հաշվառումը: Տրված ընթացիկ կանխավճարների հաշվառումը: Առհաշիվ տրված գումարների գծով ընթացիկ դեբիտորական պարտքերի հաշվառումը: Այլ ընթացիկ դեբիտորական պարտքերի հաշվառումը:

Ընթացիկ ֆինանսական ներդրումների հաշվառումը. Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ներդրումների հաշվառումը: Մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ ներդրումների հաշվառումը: Տրա-

մադրված կարճաժամկետ փոխառությունների հաշվառումը: Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական ակտիվների հաշվառումը: Ընթացիկ ֆինանսական ներդրումների արժեզրկման հաշվառումը:

Դրամական միջոցների հաշվառումը. Դրամական միջոցների և դրամական միջոցների համարժեքների սահմանումը: Դրամարկղային գործառնությունների հաշվառումը: Հաշվարկային, արտարժույթային և այլ բանկային հաշիվներով իրականացվող հաշվարկների հաշվառումը: Ճանապարհին գտնվող դրամական միջոցների, դրամական փաստաթղթերի և դրամական միջոցների համարժեքների հաշվառումը:

Եկամուտների հաշվառումը. Եկամուտների դասակարգումը: Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթի սահմանումը, չափումը և ճանաչումը: Իրացված արտադրանքի և ապրանքների հետ վերադարձումից և գների իջեցումից հասույթի ճշգրտումը: Գործառնական այլ եկամուտների հաշվառումը: Արտասովոր եկամուտների հաշվառումը: Էական սխալների և հաշվապահական հաշվառման քաղաքականության ուղղման արդյունքում ստացված նախորդ տարիների գործառնական և ոչ գործառնական եկամուտների ճշգրտման հաշվառումը:

Ծախսերի հաշվառումը. Ծախսերի դասակարգումը: Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինքնարժեքի հաշվարկումը և հաշվառումը: Իրացման ծախսերի հաշվառումը: Վարչական ծախսերի հաշվառումը: Գործառնական այլ ծախսերի հաշվառումը: Ոչ գործառնական ծախսերի դասակարգումը և հաշվառումը: Արտասովոր ծախսերի հաշվառումը: Նախորդ տարիների ծախսերի ճշգրտման հաշվառումը: Շահութահարկի գծով ծախսերի բաժանումը ընթացիկ և հետաձգված հարկի գծով ծախսի և դրանց հաշվառումը:

Կանոնադրական կապիտալի հաշվառումը. Կանոնադրական կապիտալի ձևավորման առանձնահատկությունները և հաշվառման կարգը սեփականության տարբեր ձևերի պայմաններում: Կանոնադրական կապիտալի

շարժի հաշվառումը: Մասնակիցներից /հիմնադիրներից/ հետ գնված բաժնետոմսերի, փայերի հաշվառումը: Կազմակերպությունների էմիսիոն եկամտի ձևավորման և շարժի հաշվառումը:

Ակտիվների սկզբնական չափմանը հաջորդող գնահատումներից տարբերություններից հաշվառումը. Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, բնական ռեսուրսների վերագնահատումից առաջացած արժեքի աճի հաշվումը: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները իրական արժեքով վերաչափումից գոյացած ֆինանսական հետևանքների հաշվումը: Հեջավորման գործիքների իրական արժեքով վերաչափման արդյունքում ձևավորված չիրացված շահույթների և վնասների հաշվառումը:

Ֆինանսական արդյունքի հաշվառումը. Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթի կամ վնասի բաղադրիչները: Սովորական գործունեության եկամուտների և ծախսերի համադրման հաշվառումը: Ոչ գործառնական գործունեությունից ֆինանսական արդյունքի և արտասովոր դեպքերից ֆինանսական հետևանքի հաշվառումը: Էական սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքով նախորդ տարիների չբաշխված շահույթի /չծածված վնասի/ մնացորդի ճշգրտման հաշվառումը: Հաշվետու տարվա ֆինանսական արդյունքի և նրա բաշխման հաշվառումը:

Ոչ ընթացիկ պարտավորությունների հաշվառումը. Ֆինանսական գործիքների արդյունքում ձևավորվող ֆինանսական պարտավորությունների սահմանումը, դասակարգումը, ճանաչումը: Երկարաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների գծով պարտավորությունների հաշվառումը: Ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունների հաշվառումը: Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով առաջացած փոխառության ծախսումների հաշվառումը: Երկարաժամկետ պարտավորությունների ռիսկայնության հետ կապված որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ ֆի-

նանսական պարտավորությունների հաշվառումը: Ակտիվներին վերաբերող շնորհների, բացասական գույվիլի, ոչ ընթացիկ պահուստների հաշվառումը:

Ընթացիկ պարտավորությունների հաշվառումը. Կարճաժամկետ վարկերի և փոխառությունների ձեռք բերման և մարման հաշվառումը: Գնումների գծով կրեդիտորական պարտքերի հաշվառումը: Բյուջեի պարտքերի գծով ձևավորման ընթացիկ պարտավորությունների հաշվառումը: Աշխատավարձի և աշխատակիցների հետ այլ կարճաժամկետ հատուցումների գծով կրեդիտորական պարտքի հաշվառումը: Պարտադիր սոցիալական ապահովագրության գծով կրեդիտորական պարտքի հաշվառումը: Այլ ընթացիկ պարտավորությունների հաշվառումը:

Ֆինանսական հաշվետվություններ. Ֆինանսական հաշվետվությունների փաթեթը և նրա տեղեկատվական նշանակությունը. Ֆինանսական հաշվետվությունների նպատակը: Ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչները: Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման կարգը: Պատասխանատվություն ֆինանսական հաշվետվությունների համար: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող տեղեկատվությանը ներկայացվող պահանջները: Հաշվապահական հաշվեկշիռը, կառուցվածքը, բովանդակությունը և տեղեկատվական նշանակությունը: Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը և նրա հիմնական հոդվածները: Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության տողային հոդվածները և տեղեկատվության վերլուծական նշանակությունը: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և գործառնական, ներդրումային ու ֆինանսական գործունեության դրամական հոսքերի մասին տեղեկատվության վերլուծական նշանակությունը:

Կառավարչական հաշվառման էությունը և կազմակերպումը. Կառավարչական հաշվառման էությունը, բովանդակությունը (կառավարչական և

արտադրական) և նշանակությունը կազմակերպության արտադրական գործունեության կառավարման համար: Կառավարչական և ֆինանսական հաշվառման նմանությունների և տարբերությունների վերլուծությունը և փոխադարձ կապը: Կառավարչական հաշվառման նպատակը, տեղեկատվության օգտագործողները, կառավարչական հաշվառման կողմից ներկայացվող տեղեկատվության բովանդակությունը, հաշվետվությունների պարբերականությունը: Կառավարչական հաշվառման կազմակերպումը և կառավարումը: Կառավարչական հաշվառման տեղը ՀՀ հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների գործընթացում:

Արտադրական ծախսումների դասակարգումը և հաշվառման սկզբունքը.

Հասկացություն արտադրական ծախսումների մասին: Ծախսեր և ծախսումներ կատեգորիաների հաշվապահական բովանդակությունը: Արտադրական ծախսումների և տնտեսական ծախսերի էությունը և հաշվառման առանձնահատկությունները: Հաշվետու ժամանակաշրջանին և թողարկվող արտադրատեսակին վերագրվող ծախսերը և ծախսումները: Արտադրական ծախսումների դասակարգումը՝ հիմնական և վերադիր ծախսումների, հաստատուն և փոփոխուն ծախսումների: Արտադրանքի ինքնարժեքի ձևավորումը և տարրերը: Ուղղակի և անուղղակի արտադրական ծախսումները:

Արտադրական ծախսումների հաշվառումը. Արտադրական ծախսումների սինթետիկ հաշվառման ընդհանուր սխեման: Կառավարչական հաշվառման հաշիվների դասի ֆունկցիոնալ նշանակությունը: Ուղղակի արտադրական ծախսումների հաշվառումն ու բաշխումը: Ուղղակի նյութական ծախսումների հաշվառումը: Ծախսված նյութերի գնահատման մեթոդները: Արտադրական թափոնների հաշվառումը: Աշխատանքի վճարման գծով և սոցիալական ապահովագրության վճարների գծով ուղղակի ծախսումների հաշվառումը: Այլ ուղղակի արտադրական ծախսումների հաշվառումը: Օժանդակ արտադրության ծախսումների հաշվառումը: Օժանդակ արտադրությունների փոխադարձ ծառայությունների ինքնարժեքի որոշման առանձնահատկությունները:

Անուղղակի արտադրական ծախսումների հաշվառումն ու բաշխումը:
Անուղղակի ծախսումների բաշխման բազաները:

Արտադրական ծախսումների ամփոփ հաշվառումը և արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիան. Արտադրական ծախսումների ամփոփ հաշվառման մեթոդները: Ծախսումների հաշվառման առարկայական, պատվերային և փուլային մեթոդներով թողարկված արտադրանքի ինքնարժեքի հաշվարկումը և կատարված ծախսումների բաշխումը պատրաստի և անավարտ արտադրության միջև: Անավարտ արտադրության գնահատման մեթոդները: Ծախսումների հաշվառման նորմատիվային համակարգը: Ստանդարտ (նորմատիվային) ծախսումներով ինքնարժեքի ձևավորումը: Նորմաների փոփոխության հաշվառումը: Նորմայից շեղումների հաշվառումը: Փաստացի ինքնարժեքի որոշումը: Նորմատիվային կալկուլյացիան և շեղումների վերլուծությունը ըստ առաջացման տեղերի և պատասխանատվության կենտրոնների: Միավոր արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիան: Կալկուլյացիայի տեսակները և տեղեկատվական նշանակությունը գնագոյացման պրոցեսում:

Ծախսումների կառավարման համակարգը. Արտադրական ծախսումների և արտադրանքի ծավալի հարաբերակցությունը: Արտադրանքի ինքնարժեքի հաշվառումը ըստ հաստատուն և փոփոխուն ծախսումների: Փոփոխուն ծախսումների հաշվառման համակարգը: Արտադրական ծախսումների, արտադրության ծավալների և ֆինանսական հետևանքների փոխ հարաբերության մարժինալ վերլուծությունը:

Ոչ ընթացիկ ակտիվների վերլուծությունը. Վերլուծության նշանակությունը, խնդիրները և տեղեկատվության աղբյուրները: Ոչ ընթացիկ ակտիվների վերլուծությունն ըստ կազմի ու կառուցվածքի: Ոչ ընթացիկ նյութական ակտիվների առկայության, կազմի ու կառուցվածքի վերլուծությունը: Հիմնական միջոցների վերլուծությունը: Հիմնական միջոցներով կազմակերպության ապահովվածության վերլուծությունը: Հիմնական մջոց-

ների առկայության, կազմի ու կառուցվածքի վերլուծությունը: Հիմնական մջջոցների օգտագործման արդյունավետության մակարդակի վրա ազդող գործոնների վերլուծությունը: Ոչ նյութական ակտիվների վերլուծությունը: Ոչ նյութական ակտիվների առկայության, կազմի ու կառուցվածքի վերլուծությունը: Ոչ նյութական ակտիվները ըստ տարբեր ուղղությունների: Ոչ նյութական ակտիվների իրացվելիության, շահութաբերության և շրջանառելիության վերլուծությունը: Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների վերլուծությունը: Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների առկայության, կազմի և կառուցվածքի վերլուծությունը: Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների շահութաբերության վերլուծությունը:

Ընթացիկ ակտիվների վերլուծությունը. Վերլուծության նշանակությունը, խնդիրները և տեղեկատվական աղբյուրները: Ընթացիկ ակտիվների կազմի ու կառուցվածքի վերլուծությունը: Պաշարների վերլուծությունը: Պաշարների առկայության, կազմի ու կառուցվածքի վերլուծությունը: Նյութական պաշարների վերլուծությունը: Նյութական պաշարներով կազմակերպության ապահովվածության վերլուծությունը: Արտադրական և նյութատեխնիկական մատակարարման ծրագրերի համապատասխանության գնահատումը: Նյութական պաշարների օգտագործման արդյունավետության ցուցանիշների վերլուծությունը: Նյութատարության գործոնային վերլուծությունը: Ապրանքային պաշարների վերլուծությունը: Ապրանքային հաշվեկշռի վերլուծությունը: Արտադրանքի արտադրության վերլուծությունը: Արտադրական ծրագրի ձևավորման և կատարման վերլուծությունը: Արտադրանքի արտադրության վերլուծությունն ըստ տեսականու, կառուցվածքի, որակի և համաչափության: Արտադրանքի ծավալի վրա ազդող գործոնների վերլուծությունը: Աշխատաժամանակի օգտագործման վերլուծությունը: Աշխատանքի արտադրողականության գործոնային վերլուծությունը: Արտադրանքի աշխատատարության վերլուծությունը: Պայմանագրային պարտավորությունների կատարման վեր-

լուծությունը: Արտադրանքի իրացման վերլուծությունն ըստ առանձին շուկաների: Ծախսերի վերլուծությունը: Ծախսերի կազմի և կառուցվածքի վերլուծությունը: Ծախսերի դասակարգումը ըստ տարբեր հատկանիշների: Արտադրանքի ինքնարժեքի վերլուծությունն ըստ տնտեսական տարրերի: Ուղղակի նյութական ծախսումների վերլուծությունը: Ուղղակի աշխատանքային ծախսումների վերլուծությունը: Անուղղակի արտադրական ծախսումների վերլուծությունը: Շրջանառության ծախսերի վերլուծությունը: Իրացման ծախսերի վերլուծությունը: Վարչական ծախսերի վերլուծությունը: Արտադրանքի ինքնարժեքն ընդհանրացնող ցուցանիշների վերլուծությունը: Փոփոխուն ծախսերի վերլուծությունը: Հաստատուն ծախսերի վերլուծությունը: Ծախսերի մակարդակի նվազեցման ռեզերվների վերլուծությունը: Դեբիտորական պարտքերի վերլուծությունը: Դեբիտորական պարտքերի կազմի և կառուցվածքի վերլուծությունը: Դեբիտորական պարտքերի վերլուծությունը ըստ գոյացման ժամկետների և պատճառների: Դեբիտորական պարտքերի շրջանառելիության վերլուծությունը: Դրամական հոսքերի վերլուծությունը: Դրամական հոսքերի վերլուծությունը ըստ գործառնական, ներդրումային և ֆինանսական ոլորտների: Դրամական միջոցների համարժեքների վերլուծությունը:

Սեփական կապիտալի վերլուծությունը. Վերլուծության նշանակությունը, խնդիրները և տեղեկատվական աղբյուրները: Սեփական կապիտալի առկայության, կազմի և կառուցվածքի վերլուծությունը: Կանոնադրական կապիտալի վերլուծությունը: Բաժնետոմսերի շահույթբերության վերլուծությունը: Ֆինանսական արդյունքների գնահատումը: Կուտակված շահույթի վերլուծությունը: Ֆինանսական արդյունքների վերլուծությունն ըստ կազմի ու կառուցվածքի: Եկամուտների և ծախսերի վերլուծությունը: Իրացումից շահույթի գործոնային վերլուծությունը: Գործառնական այլ գործունեությունից և ոչ գործառնական գործունեությունից եկամուտների և ծախսերի վերլուծությունը: Զուտ

շահույթի բաշխման և օգտագործման վերլուծությունը:

Ոչ ընթացիկ պարտավորությունների վերլուծությունը. Վերլուծության նշանակությունը, խնդիրները և տեղեկատվական աղբյուրները: Ոչ ընթացիկ պարտավորությունների վերլուծությունն ըստ կազմի ու կառուցվածքի: Ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը:

Երկարաժամկետ վարկերի և փոխառությունների վերլուծությունը: Երկարաժամկետ վարկերի օգտագործման արդյունավետության վերլուծությունը:

Ընթացիկ պարտավորությունների վերլուծությունը. Վերլուծության նշանակությունը, խնդիրները և տեղեկատվական աղբյուրները: Ընթացիկ պարտավորությունների կազմի ու կառուցվածքի վերլուծությունը: Ընթացիկ ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը: Կարճաժամկետ վարկերի օգտագործման արդյունավետության վերլուծությունը: Կրեդիտորական պարտքերի վերլուծությունը: Կրեդիտորական պարտքերի վերլուծությունը ըստ գոյացման ժամկետների և պատճառների: Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության վերլուծությունը:

Ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը. Վերլուծության նշանակությունը, խնդիրները և տեղեկատվական աղբյուրները: Հաշվապահական հաշվեկշռի վերլուծական հատկությունները: Հաշվապահական հաշվեկշռի կազմի ու կառուցվածքի վերլուծությունը: Ֆինանսական գործակիցների համակարգը: Հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը: Հաշվեկշռի տարբեր բաժինների վերախմբավորումն ըստ իրացվելիության աստիճանի: Ակտիվների իրացվելիության վերլուծությունը: Գործարար ակտիվության վերլուծությունը: Ընթացիկ ակտիվների շրջանառելիության վերլուծությունը: Շրջանառելիության փոփոխության տնտեսական հետևանքի որոշումը: Շահութաբերության վերլուծությունը: Ակտիվների շահութաբերության վերլուծությունը: Իրացման ծավալի շահութաբերության վերլուծությունը: Սեփական կապիտալի շահութաբերության վերլուծությունը: Ֆինանսական կայունության վերլուծությունը: Սեփական և փոխառու կապիտալի օգտագործման արդյու-

նավետության գնահատումը: Ֆինանսական լծակի վերլուծությունը: Սեփական ընթացիկ ակտիվների վերլուծությունը: Շահութաբերության շեմի որոշումը: Ֆինանսական կայունության պաշարի գնահատումը: Ֆինանսական դրության կարճաժամկետ կանխատեսումը:

Ֆինանսական դրության ամփոփ գնահատումը:

Անվճարունակ կազմակերպության ֆինանսական վերլուծության առանձնահատկությունները. Վերլուծության նշանակությունը, խնդիրները և տեղեկատվական աղբյուրները: Հաշվապահական հաշվեկշռի կառուցվածքի գնահատման առանձնահատկությունները: Կազմակերպության վճարունակության կորստի և վերականգնման վերլուծությունը: Մնանկացման ռիսկի վերլուծությունը Ալտմանի եղանակով: Վճարունակության մակարդակի բարելավման գծով ռեզերվների վերլուծությունը:

Աուդիտի էությունը և բովանդակությունը. Աուդիտի առաջացումը: Աուդիտի անհրաժեշտությունը: Աուդիտի էությունը: Ֆինանսական հաշվետվություններից օգտվողները: Աուդիտի նպատակները և խնդիրները: Աուդիտի անցկացման փուլերը: Ֆինանսական հաշվետվությունների ծավալը: Աուդիտի տեսակները: Աուդիտի տեղը վերահսկողության համակարգում: Աուդիտը և վերահսկողությունը:

Աուդիտորական գործունեությունը և նրա կարգավորումը. գործունեության կարգավորումը: Աուդիտում ձեռնարկատիրական գործունեության հիմնական իրավական ձևերը: Ատեստավորումը և արտոնագրումը: Աուդիտի սուբյեկտները: Փորձաքննություն և ստուգում ըստ պետական օրգանների հանձնարարության: Փորձաքննության և ստուգման կազմակերպման առանձնահատկությունները: Փորձագետ հաշվապահի պարտականությունները և իրավունքները: Աուդիտորների իրակական և մասնագիտական պատասխանատվությունը: Աուդիտորական գործունեությունը հանրապետությունում:

Աուդիտի մեթոդոլոգիական և աուդիտորական ստանդարտները. Աուդիտորական ստանդարտների նպատակները և հիմնական սկզբունքները:

Միջազգային աուդիտորական ստանդարտները: Հայաստանի Հանրապետության աուդիտորական ստանդարտների բովանդակությանը ներկայացվող պահանջները:

Աուդիտորական ստուգման ռազմավարությունը. Աուդիտորական ստուգման ռազմավարության որոշումը: Աուդիտի պլանավորումը: Նախապլանային նախապատրաստումը: ձեռնարկության վերաբերյալ ընդհանուր ինֆորմացիայի ստացումը: Աուդիտի նյութատարության որոշումը: Աուդիտորական ռիսկի գնահատումը: ներքին վերահսկողության համակարգի գնահատումը: Փորձագետների աշխատանքի օգտագործումը:

Աուդիտորական եզրակացություն. Աուդիտորական հաշվետվության կառուցվածքը և ձևերը: Աուդիտ որական եզրակացությունների տեսակները: Տեղեկատվություն ղեկավարների համար: Աուդիտորական հաշվետվության կազմման թվականը, իրադարձություններ հաշվեկշռի ֆինանսական հաշվետվություններից հետո:

Ֆինանսական արդյունքների հաշվետվությունների կազմման ճշտության ստուգումը. Արտադրանքի իրացումից ստացված հասույթի ձևավորման ճշտության ստուգումը: Արտադրության և իրացման ծախսերի ձևավորման ճշտության ստուգումը /ուղղակի ծախսերի, աշխատավարձի և սոցիալական ապահովագրության, արտադրության նախապատրաստման և յուրացման, ընդհանուր արտադրական և ընդհանուր տնտեսական, ատևորային ծախսերի/: Շահույթի ձևավորման ճշտության ստուգումը: Իրացման արդյունքների արտացոլման ճշտության որոշումը: Շահույթի օգտագործման ճշտության ստուգումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սարգսյան Ա.Զ., Համբարձումյան Ռ.Պ., Սարգսյան Գ.Ա., Հաշվապահական հաշվառում: Ուս. Ձեռնարկ. Երևան: Տիգրան Մեծ, 2009. - 524 էջ
2. Սարգսյան Ա.Զ., Պողոսյան Մ.Բ., Կառավարչական հաշվառում: Ուս. ձեռնարկ. Երևան: Տնտեսագետ, 2009. - 167 էջ

3. Սարգսյան Ա.Ջ., Սարգսյան Ա.Հ., Մարջանյան Ա.Մ., Ֆինանսական հաշվառման հիմունքները /Երևան: Տնտեսագետ, 1999. - 164 էջ
4. Մովսիսյան Թ.Հ., Հաշվապահական հաշվառում. Երևան: ԹՄ Աուդիտ ՓԲԸ, 2015. - 484 էջ
5. Աուդիտ: Ու.ձեռնարկ/ Ա.Ջ. Սարգսյան, Կ.Ա.Առաքելյան, Ս.Ծ.Ղազարյան, Ա.Կ.Առաքելյան, Եր. Տիգրան Մեծ. 2008. - 160 էջ
6. Բայադյան Ա.Հ., Ֆինանսական վերլուծություն: Ուսումնական ձեռնարկ /Երևան: Լիմուշ, 2013. - 294 էջ
7. Գասպարյան Ն., Զուրաբյան Կ., Սահակյան Հ., Հաշվապահական հաշվառում: Ու. ձեռնարկ. Եր.: ՀՈՒՄԿ կրթական հիմնադրամ, 2012. - 160 էջ
8. Կիրակոսյան Գ.Ե., Սարգսյան Ա.Ջ., Ճուղուրյան Ա.Գ., Ավետիսյան Է.Հ., Մենեջմենթի ֆինանսական տեղեկատվություն: Ե.: ԱԱԱԱ, 2005. - 474 էջ:
9. Հարությունյան Ա., Հովհաննիսյան Հ., Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում: (Ուսումնական ձեռնարկ) / Ե.: ԱԱԱԱ, 2002. - 450 էջ
10. Հարությունյան Ա., Հարությունյան Ա., Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում-2: Ու. ձեռնարկ. Երևան: ԱԱԱԱ, 2003. - 442 էջ
11. Հարությունյան Ա., Հովհաննիսյան Հ., Ֆինանսական հաշվառման հիմունքներ: Ու. ձեռնարկ. Եր.: «ԱԱԱԱ», 2005. - 452 էջ
12. Ճուղուրյան Ա.Գ., Աբրահամյան Ա.Գ., Սարգսյան Ա.Ջ., Վարդանյան Ա.Ս., Զաքոյան Է.Վ., Կարապետյան Թ.Գ., Հաշվապահական հաշվառումը բանկերում: Ու. Ձեռնարկ. Երևան: Հեղ. հրատ, 2003. - 301 էջ
13. Ճուղուրյան Ա.Գ., Գասպարյան Կ.Է., Հաշվապահական հաշվառումը հանրային հատվածում. Երևան: Էդիթ Պրինտ, 2012.-104 էջ
14. Ճուղուրյան Ա.Գ., Կառավարչական հաշվառում: Ու. ձեռնարկ Երևան: Տնտեսագետ, 2005. - 403 էջ
15. Ճուղուրյան Ա.Գ., Հարկային հաշվապահություն: (Ուսումնական ձեռնարկ). Երևան: Ա.հ., 2001. - 104 էջ
16. Մովսիսյան Թ.Հ., Փաստաթղթավորում: Հաշվապահական հաշվառման վարման ձևեր. Երևան: Զանգակ-97, 2003. - 351 էջ
17. Սահակյան Հ., Զուրաբյան Կ., Ֆինանսական հաշվառում: Ուսումնական ձեռնարկ / Երևան: ՀՈՒՄԿ հիմնադրամ, 2008. - 132 էջ
18. Սարգսյան Ա., Մարջանյան Ա., Ոչ ընթացիկ ակտիվների հաշվառումը. - Եր., Տնտեսագետ, 2003. - 152 էջ
19. Սարգսյան Ա.Ջ., Առաքելյան Ա.Կ., Կառավարչական վերլուծություն: Ուսումնական ձեռնարկ /Երևան: Տիգրան Մեծ, 2011. - 128 էջ.
20. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ

21. Кондраков Н.П. Бухгалтерский учет. Уч. пособие. М.:Инфра М, 2011.848с.
22. Аудит: учебник / В.П. Суйц. — Москва: КноРус, 2015. — 287 с.
23. Теория бухгалтерского учета : учебник / Т.М. Рогоуленко, С.В. Пономарева. — Москва: КноРус, 2016. — 172 с.
24. Лытнева Н.А., Малявкина Л.И., Федорова Т.В., Бухгалтерский учет. М.: Инфра-М., 2013. – 512с.
25. Бухгалтерский учет и анализ: учебник и практикум для прикладного бакалавриата / Г. В. Шадрина, Л. И. Егорова. М.: Юрайт, 2015. 429 с.
26. Лебедева Е.М., Бухгалтерский учет. Уч. пособие. М.: . 2012. 304с.
27. Миславская Н.А., Поленова С.Н., Бухгалтерский учет. Учебник. М.: Дашков и Ко. 2012. – 592с.
28. Гомола А.И., Кириллов В.Е., Кириллов С.В., Бухгалтерский учет. Учебник. М.: Академия. 2013. – 480с.
29. Бухгалтерский учет и анализ: учебник/ О. А. Агеева, Л. С. Шахматова. - М.: Юрайт, 2015. -509 с
30. Арнс Э.А., Лоббек Дж. К. Аудит. М Финансы и статистика 1995г. 560с
31. Савицкая, Г.В. Экономический анализ: учебник / Г.В. Савицкая. – 12-е изд., доп., испр. – М.: Новое знание, 2006. – 679 с.
32. Теория экономического анализа: учебник / А. Д. Шеремет. - 2-е изд., дополненное. - Москва: Инфра-М, 2010. - 367 с
33. Ковалев В.В., Ковалев Вит. В. Анализ баланса или как понимать баланс. М.; - Проспект. 2012. – 784с.
34. Фельдман И.А., Бухгалтерский учет. Учебник. М.: Юрайт. 2014. – 288с.
35. Баканов М. И., Мельник М. В., Шеремет А. Д., Теория экономического анализа. Учебник.- М.: Финансы и статистика, 2005, — 536 с.
36. Селезнева, Н.Н. Финансовый анализ. Управление финансами: уч. Пособие / Н.Н. Селезнева, А.Ф. Ионова. М.: Юнити-Дана, 2005.–639 с.
37. Басовский, Л.Е. Комплексный экономический анализ хозяйственной деятельности: учеб. пособие / Л.Е. Басовский, Е.Н. Басовская. – М.: ИНФРА-М, 2005. – 366 с.
38. Крылов, Э.И. Анализ финансовых результатов, рентабельности и себестоимости продукции: учеб. пособие / Э.И. Крылов. – М.: Финансы и статистика, 2005. – 720 с.

7. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վիճակագրության առարկան, մեթոդը և խնդիրները. Վիճակագրական գիտության զարգացման փուլերը և նրա առարկան: Վիճակագրության մեթոդը և նրա հիմնական առանձնահատկությունները: Վիճակագրական գիտության կառուցվածքը, նրա հիմնական ճյուղերը: Վիճակագրության կապը մյուս գիտությունների հետ: Վիճակագրական օրինաչափություններ և ցուցանիշներ: Վիճակագրության խնդիրները շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման ժամանակաշրջանում: Վիճակագրության կազմակերպումը ՀՀ-ում և մյուս երկրներում: Միջազգային վիճակագրական օրգանները:

Վիճակագրական դիտարկում. Վիճակագրական դիտարկումը որպես հետազոտության սկզբնական փուլ: Վիճակագրական դիտարկման ձևերը, տեսակները և եղանակները: Վիճակագրական դիտարկման օբյեկտը և միավորը: Դիտարկման նպատակը, պլանը և ծրագիրը: Վիճակագրական դիտարկման կազմակերպական հարցերը: Դիտարկման օրգանները:

Վիճակագրական խմբավորումներ, աղյուսակներ, գրաֆիկներ և բաշխման շարքեր. Վիճակագրական խմբավորումների էությունը և տեսակները: Խմբավորվող հատկանիշի ընտրության սկզբունքները: Խմբավորումների տեսակները: Խմբերի թվի և խմբավորման միջակայքի որոշումը: Երկրորդվող խմբավորումներ: Վիճակագրական աղյուսակը և նրա տարրերը: Վիճակագրական աղյուսակների տեսակները: Վիճակագրական աղյուսակների ենթակայի կառուցման և ստորոգյալի մշակման սկզբունքները: Վիճակագրական գրաֆիկների էությունը և տեսակները: Գրաֆիկական մեթոդի օգտագործումը սոցիալ-տնտեսական հետազոտություններում: Բաշխման շարքեր, դրանց էությունը և հիմնական տարրերը: Բաշխման շարքերի կառուցումը ըստ որակական և քանակական հատկանիշների: Ընդհատվող և միջակայքային շարքեր: Բաշխման օրենքները:

Բացարձակ, հարաբերական և միջին մեծություններ, տատանման ցուցանիշներ. Բացարձակ մեծությունների էությունը, տեսակները և չափի միա-

